



ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ **2017**

1	ՀՀ Կառավարության կողմից հաստատված օրենսդրական ակտերի խմբի մասին
2	ՀՀ Կառավարության կողմից հաստատված օրենսդրական ակտերի խմբի մասին
3	ՀՀ Կառավարության կողմից հաստատված օրենսդրական ակտերի խմբի մասին
4	ՀՀ Կառավարության կողմից հաստատված օրենսդրական ակտերի խմբի մասին
5	Գործունեության հիմնական ցուցանիշներ
7	Հիմնական զարգացումներ
8	Մանրածախ բանկային ծառայություններ
10	Կորպորատիվ բանկային ծառայություններ
12	Ներդրումաբանկային և առևտրային գործառնություններ
15	Տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի զարգացում
16	Տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի զարգացում
17	Տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի զարգացում
18	Տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի զարգացում
19	Արտաքին միջավայր
24	Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում
25	Ռազմավարություն և բիզնես-մոդել

ԱԿՆԱՐԿ

- 5 Գործունեության հիմնական ցուցանիշներ
- 7 Հիմնական զարգացումներ
- 8 Մանրածախ բանկային ծառայություններ
- 10 Կորպորատիվ բանկային ծառայություններ
- 12 Ներդրումաբանկային և առևտրային գործառնություններ
- 15 Տեխնոլոգիաների և ենթակառուցվածքի զարգացում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 19 Արտաքին միջավայր
- 24 Ամերիաբանկի դիրքը ՀՀ բանկային համակարգում
- 25 Ռազմավարություն և բիզնես-մոդել

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 29 Կորպորատիվ կառավարման կառուցվածքը
- 30 Տնօրենների խորհուրդ
- 31 Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ
- 33 Տնօրինություն

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- 35 Հիմնական ռիսկերը և անորոշությունները

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 43 Ֆինանսական հաշվետվություններ

ԱՐԺԵՎՈՐԵԼ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ՝ ՆՇԱՆԱԿԵՏԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ



ԱԿՆԱՐԿ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

մին ՀՀ դրամ	2016	30.06.2017	ԱՃ (%)
Ընդհանուր ակտիվներ	719,363	653,324	-9.2%
Ընդհանուր կապիտալ	64,397	67,785	5.3%
Վարկեր ¹	505,511	411,233	-18.7%
Պարտավորություններ	654,966	585,540	-10.6%
Զուտ Շահույթ ²	2,144	3,341	55.8%

Կիսամյակի ավարտին Ամերիաբանկը շարունակում էր ակտիվների որակով և եկամտաբերության մակարդակով գերազանցել միջին շուկայական ցուցանիշները: Ամերիաբանկը Հայաստանի խոշորագույն ֆինանսական հաստատությունն է և պահպանում է շուկայի առաջատարի իր դիրքերը բոլոր հիմնական ցուցանիշներով: Հաշվեկշռային որոշ ցուցանիշների նվազումը կրում է սեզոնային բնույթ և կանխատեսելի էր Բանկի դեկավարության կողմից: Ակտիվների միջին տարեկան աճը վերջին 5 տարվա ընթացքում կազմել է 24%, ինչի շնորհիվ Բանկի շուկայական մասնաբաժինը 9.7%-ից աճել է մինչև 15.7%: Ամերիաբանկը շարունակում է տնօրինել ՀՀ բանկային համակարգի խոշորագույն վարկային պորտֆելը, որի վերջին 5 տարվա միջին տարեկան աճը կազմել է 22%: Մեր ռազմավարական նպատակն է պահպանել բացարձակ առաջատարի դիրքերը՝ շարունակաբար ընդլայնելով շուկայի մեր մասնաբաժինը:

Ցանկացած ընկերության հաջողության կարևորագույն չափանիշը բարդ մակրոտնտեսական միջավայրում արդյուբավետ գործունեություն վարելու կարողությունն է:

¹ Կիսամյակային հաշվետվության շրջանակներում ակտիվիտիվները (ընդամենը 7.7 մլրդ) ներառված չեն վարկերի գումարի մեջ:
² Համադրելիության տեսանկյունից որպես 2016թ. զուտ շահույթ վերցված է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շահույթը:



Չնայած տնտեսական աճի ցարժ տեմպերի և բանկերի համար ստեղծված բարդ իրավիճակի՝ Բանկը կարողացավ վերոնշյալ մարտահրավերները վերածել հնարավորությունների: 2017թ. 1ին կիսայանի ավարտին մեր կորպորատիվ վարկային համախառն պորտֆելը կազմել է 352 մլրդ դրամ աճեց նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 23%-ով, իսկ մանրածախ վարկային պորտֆելը՝ 63 մլրդ դրամ, աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համար 22%: Մանրածախ գործառնությունների զարգացման հսկայական ներուժը պայմանավորված է ենթակառուցվածքային մեծածավալ ներդրումներով (բանկոմատներ, մասնաճյուղեր, հեռակառավարման համակարգեր): Չնայած բանկային համակարգում սուր մրցակցության հետևանքով զուտ տոկոսային մարժան շարունակվում է ենթարկվել ճկման՝ մեր զուտ շահույթը նախորդ տարվա նույն ժամանակահատված նկատմամբ աճեց 56%-ով: Շուկայում շահույթով մեր մասնաբաժինը կազմեց եկամտաբեր բանկերի ընդհանուր շահույթի 14.1%-ը, անցյալ տարվա նույն ժամանակահատվածի 13.2%-ի համեմատ: Կապիտալի եկամտաբերությունը 6 ամսվա

տարեկանացված ցուցանիշը կազմել է 10.1%՝ գերազանցելով շուկայական միջին ցուցանիշը 4.3 տոկոսային կետով: Բանկը շարունակելու է բարձրացնել շահութաբերությունը և զգալիորեն բարելավել զուտ տոկոսային մարժայի ու կապիտալի եկամտաբերության ցուցանիշները: Ջուտ տոկոսային մարժայի վրա գործադրվող ճնշումը մեղմելու նպատակով 2017թ. առաջին կիսամյակում մենք շարունակաբար նվազեցրել ենք ֆինանսավորման արժեքն ու ավանդների տոկոսադրույքները: 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում մենք խստորեն վերահսկել ենք ռիսկերը և մեր ուշադրությունը սևեռել ակտիվների որակի հետագա բարձրացման վրա: Մեկ և ավելի օր ժամկետանց չաշխատող վարկերի գործակիցը կազմել է 4.9%, որը զգալիորեն ցածր է միջին շուկայական 9.5% ցուցանիշից: Ինսոլուն և ավելի օր ժամկետանց չաշխատող վարկերի գործակիցը կազմել է 3.7%: Հաշվետու կիսամյակում Ամերիաբանկի ակտիվները կազմել են շուրջ 653.3 մլրդ ՀՀ դրամ՝ գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մեծությունը 25%-ով: 2015թ. Ամերիաբանկն առաջին բանկն էր Հայաստանի բանկային համակարգի պատմության

մեջ, որը գերազանցեց ակտիվների 1 մլրդ ԱՄՆ դոլարի ակտիվների շեմը:

2017թ. կիսամյակում Ամերիաբանկը բանկային համակարգի բացարձակ առաջատարն էլ բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով.

- ▶ Վարկային պորտֆելը (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կազմել է ավելի քան 411.2 մլրդ ՀՀ դրամ, պարտավորությունները՝ մոտ 585.5 մլրդ ՀՀ դրամ: Բանկի ընդհանուր կապիտալն աճել է 5.3%-ով՝ կազմելով մոտ 67.8 մլրդ ՀՀ դրամ:
- ▶ 2017թ. կիսամյակի վերջում վերջում Բանկի զուտ շահույթը կազմում էր ավելի քան 3.3 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 56%-ով:

Այս արդյունքները ոչ միայն Բանկի առաջատար դիրքի և վստահելիության ապացույցն են, այլև որպես շուկայի առաջատարի կողմից շուկայի հետագա զարգացման համար սահմանված նշանոդ:

Մրցանակներ և հավաստագրեր

- ▶ Cbonds ֆինանսական գործակալության հրապարակման արդյունքներով Ամերիաբանկը ճանաչվել է Հայաստանի 2017թ. տարվա «Լավագույն ներդրումային բանկ»:
- ▶ ՎՇԲ-ի կողմից Ամերիաբանկն արժանացել է 2017 թ. Շրջակա միջավայրի և սոցիալական նորարարության ոսկե մրցանակին:
- ▶ «Global Finance» ամսագրի կողմից Ամերիաբանկն արժանացել է Հայաստանի «Լավագույն ներդրումային բանկ 2017» մրցանակին:
- ▶ «Global Finance» ամսագրի կողմից Ամերիաբանկը ճանաչվել է Հայաստանի 2017թ. «Տարվա լավագույն բանկ» :
- ▶ 2017թ. Fitch միջազգային վարկանշային գործակալությունը վերահաստատեց «Ամերիաբանկի»՝ արտարժույթով երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի «B+» վարկանիշը՝ կայուն հեռանկարով:

Նորամուծություններ և ենթակառուցվածք

- ▶ Գործարկվեց cashback ծրագիր Քարֆուր հիպերմարկետի հետ համատեղ, որի շրջանակներում Ամերիաբանկի քարտատերերը ստանում են 15% գումարի հետվերադարձ Քարֆուր հիպերմարկետում քարտով գնումներ կատարելիս:
- ▶ Գործարկվեց Earlyone բջջային հավելվածը՝ հերթերի կառավարման համակարգի ներքո հեռահար կերպով նախապես հերթագրվել Ամերիաբանկում սպասարկվելու համար:
- ▶ Ընդլայնվել է գործընկեր կազմակերպությունների և վաճառքի կետերի ցանկը, որտեղ քարտով գնում կատարելու դեպքում Այո Cashback ծրագրի շրջանակներում Ամերիաբանկի քարտատերերին տրվում է մինչև 21% գումարի հետվերադարձ:
- ▶ Ընդլայնվել է ՀՀ Արդարադատության նախարարության հետ՝ պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակի ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների ցանկը:
- ▶ Մշակվեցին և ներկայացվեցին հատուկ առաջարկներ տնտեսության մի շարք ոլորտների աշխատակիցների համար:
- ▶ Ամերիաբանկի ներքին SharePoint պորտալի համակարգում իրականացվել են մի շարք ներքին գործընթացների ավտոմատացումներ և բարելավումներ:

Հաճախորդների բազա և ավանդներ

Հաճախորդների ռազմավարության և սպասարկման շարունակական բարելավման շնորհիվ՝ ավելացել է Ամերիաբանկի մանրածախ հաճախորդների բազան 2016 թվականի վերջի համեմատ 5.5%-ով: Հաճախորդների բազայի քանակական աճին զուգահեռ ավելացել է նաև ավանդային բազան՝ մանրածախ սեգմենտի ցպահանջ ավանդների բազան հունիսի 30-ին կազմել է 47,371 մլն ՀՀ դրամ՝ աճելով տարվա սկզբի համեմատ 15%-ով: Ժամկետային ավանդների բազան նույն ժամանակաշրջանի համար կազմել է 125,446 մլն ՀՀ դրամ:

2017թ. առաջին կիսամյակում Բանկը թողարկել է 19,618 մլն ՀՀ դրամի պարտատոմսեր, որոնցից 15,740 մլն ՀՀ դրամի պարտատոմսերը տեղաբաշխվել են ֆիզիկական անձանց շրջանում, ինչը վկայում է Բանկի հանդեպ հաճախորդների բարձր վստահության և արդյունավետ համագործակցության մասին:

Վճարային քարտեր

Իր ռազմավարության շրջանակներում Բանկը մշտապես կարևորում է քարտային պրոդուկտների շարունակական զարգացումը: Այս նպատակը մենք իրագործում ենք գործող քարտային պրոդուկտների բարելավման և նոր պրոդուկտների ներկայացման միջոցով: 2017 թվականի առաջին կիսամյակի ավարտին բանկն ունեցել է 79,390 քարտ՝ գրանցելով 6% աճ տարվա սկզբի համեմատ:

Շարունակելով 2016թ. ներդրված հետվճարի (cashback) համակարգը՝ Բանկը 2017 թվականին հաճախորդներին ներկայացրեց նոր ծրագիր՝ Զարֆուր խանութում առևտրի դիմաց հետվճարի տրամադրում:

Բանկի քարտային պրոդուկտների զարգացման հիմքում ընկած են սպասարկման բարձր որակն ու ծառայությունների հասանելիությունը: Քարտային գործարքների շուրջօրյա մոնիտորինգն ու տեխնիկական օժանդակումը թույլ են տալիս բարձրակարգ աջակցություն ցուցաբերել հաճախորդներին:

Աշխատավարձային նախագծեր

2017թ. Ամերիաբանկը շարունակեց աշխատավարձային նոր նախագծերի իրականացումը՝ այս պրոդուկտն առավել արդյունավետ ու շահավետ դարձնելով հաճախորդների համար: Տարբեր ընկերությունների ու կազմակերպությունների հետ առաջին կիսամյակում ստորագրվեց աշխատավարձային նախագծերի 105 պայմանագիր, ինչը գերազանցում է նախորդ ամբողջ տարվա արդյունքը 16%-ով:


Բանկը շարունակական քայլեր է ձեռնարկում աշխատավարձային նախագծերի ներքո սպասարկվող հաճախորդների հետ համագործակցությունը զարգացնելու ուղղությամբ՝ որպես նպատակային ցուցանիշ սահմանելով ոչ միայն քարտերն այլև այլ բանկային ծառայությունները:

Մանրածախ վարկավորում

2017թ. առաջին կիսամյակում Բանկը շարունակեց դեռևս նախորդ տարի սկսված գործընթացը, որն ուղղված էր վարկավորման իր պայմանների վերանայմանն ու բարելավմանը: Այս տարի մեծ ուշադրություն է դարձվել գործող հաճախորդների զարգացմանը՝ հաճախորդներին առաջարկելով ավելի պարզ և արագ վարկավորման գործընթաց: 2017թ. իրականացված աշխատանքների շնորհիվ Բանկի մանրածախ վարկային պորտֆելը կազմում էր 63,063 մլն ՀՀ դրամ՝ արձանագրելով 5% աճ տարվա սկզբի համեմատ:

Մանրածախ ՓՄՁ վարկերը 30.06.17թ. կազմում էին 13,941 մլն ՀՀ դրամ, հիփոթեքային վարկերի պորտֆելը տարվա համեմատ առաջին կիսամյակում աճել է 8%-ով՝ կազմելով 21,628 մլն ՀՀ դրամ, ավտովարկերի պորտֆելը կազմել է 1,705 մլն ՀՀ դրամ, իսկ վարկային քարտերինը՝ 16,827 մլն ՀՀ դրամ:

Ամերիաբանկի մանրածախ սեգմենտի վարկային պորտֆելի կառուցվածքը



Կորպորատիվ բանկային ծառայությունների շուկայում Ամերիաբանկն ունի վստահելի ռազմավարական գործընկերոջ համբավ: Բանկը ցուցաբերում է անհատական մոտեցում և օգնում յուրաքանչյուր հաճախորդին գտնել տարբեր ֆինանսական գործիքներից բաղկացած, իր համար լավագույն լուծումը:

2017թ. առաջին կիսամյակի ընթացքում Բանկը պահպանեց վերջին 7 տարիների ընթացքում ունեցած կորպորատիվ վարկավորման ոլորտում առաջատարի իր դիրքը: Ամերիաբանկը կրկին առաջինն է՝ ըստ խոշոր կազմակերպություններին

տրամադրված վարկերի: Հաշվետու ժամանակաշրջանում 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատ իրավաբանական անձանց տրված վարկերը աճել են 23.5%-ով՝ կազմելով 366 մլրդ ՀՀ դրամ: 2017թ. Բանկը շարունակեց ընդլայնել ՓՄՁ վարկավորման իր պորտֆելը՝ մրցակցային և բարենպաստ պայմաններով ֆինանսավորում առաջարկելով փոքր և միջին բիզնեսին: ՓՄՁ վարկավորմանն ուղղված նպատակային քաղաքականության արդյունքում 2016թ. նույն ժամանակաշրջանի համեմատ ՓՄՁ վարկերի պորտֆելն աճեց 21%-ով՝ կիսամյակի վերջում կազմելով 73.6 մլրդ ՀՀ դրամ (153 մլն ԱՄՆ դոլար): Նշված աճի հետևանքով տարվա սկզբի համեմատ ՓՄՁ վարկերի տեսակարար կշիռը իրավաբանական անձանց տրված վարկերում 16.7%-ից աճել է և կազմել 20%:

Բանկը շարունակում է կորպորատիվ հաճախորդ-ների ֆինանսավորման ընթացքում ցուցաբերել ճկուն վարկային մեխանիզմների կիրառման, հաճախորդներին ցուցաբերվող անհատական մոտեցման և մատուցվող ծառայությունների բարձր որակի քաղաքականություն: Ինչպես խոշոր, այնպես էլ ՓՄՁ-ների ֆինանսավորումն ընդգրկում է բազմաթիվ ոլորտներ, այդ թվում՝ էներգետիկան, գյուղատնտեսությունը, շինարարությունը, զբոսաշրջությունը և այլ ոլորտներ: Բանկը շարունակում է հատուկ ուշադրությամբ մոտենալ հատկապես էներգաարդյունավետության և վերականգնվող էներգետիկայի նախագծերի, ինչպես նաև արտահանմանն ուղղված նախագծերի ֆինանսավորմանը: ՓՄՁ վարկավորման մասով կիսամյակի ընթացքում հատկապես ակտիվացել է գործարար կանանց վարկավորման նախաձեռնությունը:

Լիզինգ և ֆակտորինգ

Տնտեսության ֆինանսավորման այլընտրանքային մեթոդների շարքում ֆակտորինգային գործառնությունները համարվում են կարճաժամկետ ֆինանսավորման ամենահարմար լուծումներից մեկը: 2017թ. առաջին կիսամյակի տվյալներով Ամերիաբանկի ֆակտորինգի պորտֆելը կազմել է 4.4 մլրդ ՀՀ դրամ: Ինչպես նախորդ տարի, 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում ևս գործարքների զգալի մասը՝ 64%-ը, բաժին է ընկել արտահանման ֆակտորինգին: Նշված գործառնությունների ծավալի ընդլայնումը

Բանկին հնարավորություն տվեց ներգրավել շրջանառու կապիտալի և դրամական միջոցների կարիք ունեցող բոլոր չափերի ընկերություններ տարբեր ոլորտներից: Արդյունքում արտահանման ֆակտորինգի ընդհանուր ծավալը կազմեց 6.02 մլրդ ՀՀ դրամ: Բազմաբնույթ հաճախորդների հետ աշխատանքն Ամերիաբանկին թույլ է տալիս նրանցից յուրաքանչյուրի համար ոչ ստանդարտ ու առանձնահատուկ մոտեցումներ մշակել և միմյանց հետ հետաձգված վճարման պայմաններով համագործակցող հաճախորդներին նոր լուծումներ առաջարկել:

2013թ. Բանկը հանդիսանում է «Ֆակտորգ Չեյն Ինթերնեշնլ» միջազգային ֆակտորինգային միության անդամ: Նշված կառույցը ֆակտորինգի և դեբիտորական պարտքի ֆինանսավորման բնագավառում միջազգային ներկայացուցչական մարմինն է, որին 2016թ. միացավ նաև International Factors Group միջազգային ֆակտորինգային կազմակերպությունը: Սա եզակի հարթակ է, որը ներկրողներին և արտահանողներին թույլ է տալիս ֆակտորինգային գործառնությունների ոլորտում սերտ համագործակցություն ծավալել միջազգային մակարդակով:

Ամերիաբանկը Հայաստանում առևտրի ֆինանսավորման ծառայություններ մատուցող հիմնական կառույցներից է: Մեր առաջարկած գործիքները նախատեսված են՝ մեղմացնելու ինչպես օտարերկրյա, այնպես էլ տեղական շուկաների ռիսկերը: Թողարկված ակրեդիտիֆսների ու բանկային երաշխիքների, սպասարկման բարձր մակարդակի ու նոր հետաքրքիր նախագծերի համար Բանկն արժանանում է հեղինակավոր միջազգային կազմակերպությունների բազմաթիվ մրցանակների, այդ թվում՝ ՎՇԲ-ի՝ «Հայաստանում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին, ՄՖԿ-ի՝ «Կովկասյան տարածաշրջանում առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում ամենաակտիվ թողարկող բանկ» մրցանակին, ՎՇԲ-ի՝ «Տարվա լավագույն գործարք» մրցանակին՝ Հայաստանում նոր սերնդի օպտիկամանրաթելային ցանցի կառուցման ֆինանսավորման համար, ՄՖԿ-ի՝ «Լավագույն թողարկող բանկ առևտրի ֆինանսավորման համաշխարհային ծրագրի շրջանակներում Էներգիայի արդյունավետ օգտագործման նախագծերում» մրցանակին, Կոմերցբանկի՝ «Առևտրի ֆինանսավորման ոլորտում անթերի համագործակցության» մրցանակին, ՎՇԲ-ի՝ «Տարվա գործարք՝ Էներգաարդյունավետություն» մրցանակին՝ Հայաստանում ջերմոցային

ենթակառուցվածքի Էներգաարդյունավետության նբարելավման համար: Ամերիաբանկը նաև առաջին հայկական բանկն է, որն ստացել է ՎՇԲ-ի առևտրի աջակցման ծրագրի շրջանակներում հաստատող բանկի կարգավիճակ: 2017թ. առաջին կիսամյակում ՎՇԲ-ը Ամերիաբանկին շնորհեց «2017 Կայունության մրցանակ» ոսկե մրցանակը՝ Ջերմոցների Էներգաարդյունավետության բարելավման ծրագրի իրականացման համար: Հաճախորդների հետ սերտ համագործակցության արդյունքում Բանկը կարողանում է հիմնավորված խորհրդատվություն և հաճախորդի ֆինանսական կարիքներից բխող նորարար լուծումներ առաջարկել: 2017թ. առաջին կիսամյակում Բանկը ևս մեկ անգամ ապացուցեց, որ առևտրի ֆինանսավորման ոլորտում հուսալի, դինամիկ և վստահելի գործընկեր է: 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում Բանկի կողմից թողարկված ակրեդիտիֆսների ու բանկային երաշխիքների ընդհանուր ծավալը գերազանցեց 6.6 մլրդ ՀՀ դրամը:

Շնորհիվ ՄՖԿ-ից, ՎՇԲ-ից, ԱՇԲ-ից և մի շարք խոշոր առևտրային բանկերից ներգրավված միջոցների՝ Բանկը թողարկում է ակրեդիտիֆսներ և ֆինանսավորում հաճախորդների ներմուծման գործարքները շուկայականից ցածր տոկոսադրույքներով: Ընդհանուր առմամբ, 2017թ. առաջին կիսամյակում Բանկը ֆինանսավորում էր առևտուրն ինչպես տեղական և միջազգային վճարային գործիքների թողարկման և արտահանման/ներմուծման գործառնությունների սպասարկման, այնպես էլ միջազգային բանկերից և ֆինանսական հաստատություններից

ռեսուրսների ներգրավման հաշվին հայրենական արտադրողների արտահանման և ներկրման գործառնությունների ուղղակի ֆինանսավորման միջոցով: Մասնավորապես, Ամերիաբանկի համար միջազգային ֆինանսական կազմակերպությունների և առևտրային բանկերի կողմից բացված վարկային սահմանաչափերը 2017թ. առաջին կիսամյակի վերջում գերազանցում էին 71 մլրդ ՀՀ դրամը: 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում Ամերիաբանկը շարունակեց ազգային նշանակության մի քանի նախագծերի ֆինանսավորումը արտադրության, ջերմոցային տնտեսության, հանքաարդյունաբերության, մետաղագործության և հումքի ձեռքբերման ոլորտներում: Այդ գործարքները թե՛ ծավալի, թե՛ նշանակության տեսանկյունից հատկապես տպավորիչ էին և՛ տեղական շուկայի, և՛ տարածաշրջանի մակարդակով:

ԱԿՆԱՐԿ ՆԵՐԴՐՈՒՄ ԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԿՆԱՐԿ

Ներդրումաբանկային և առևտրային գործառնություններ

Որպես նորարարական ունիվերսալ բանկ՝ Ամերիաբանկը հիմք է ստեղծել Հայաստանում ներդրումաբանկային և առևտրային գործառնությունների ոլորտի ծառայությունների զարգացման համար: Բարեհաջող իրականացնելով բազմաթիվ անսախաղեպ, ոլորտի համար էական գործարքներ և պարբերաբար ստեղծելով նոր հնարավորություններ ներդրողների համար՝ Ամերիաբանկը վաստակել է նորարար ներդրումային բանկի համբավ: Ամերիաբանկը տրամադրում է ներդրումաբանկային և առևտրային ծառայությունների ամենալայն տեսականին Հայաստանում: Այն ընդգրկում է կորպորատիվ ֆինանսները, կապիտալի շուկաները, միաձուլումներն ու ձեռքբերումները, արտարժույթային և բրոքերային գործառնությունները, միջնորդություն Դեպոզիտարիայի կողմից արժեթղթերի ռեեստրավարման և պահառության ծառայությունների ժամանակ:

Կորպորատիվ ֆինանսների խորհրդատվություն

Ամերիաբանկի Կորպորատիվ ֆինանսների բաժինն առաջարկում է ընթացիկ օժանդակություն կորպորատիվ ֆինանսների ոլորտում և լուծումների մշակում Ամերիաբանկի հաճախորդների համար: Թիմը համախմբել է փորձառու բազմակողմանի մասնագետների, ովքեր կարող են խորհրդատվություն տրամադրել ամենատարբեր

բնագավառներում՝ պարտքային և փայտիթրական ֆինանսավորում կապիտալի փակ շուկաներից, վարկանիշի ստացում և ֆինանսավորման ռազմավարության մշակում: 2016թ. Կորպորատիվ ֆինանսների բաժինը էական ներդրում ունեցավ Բանկի հետագա աճն ապահովելու գործում՝ ներգրավելով 100 մլն ԱՄՆ դոլար միջոցներ 5 տարբեր միջազգային/զարգացման ֆինանսական հաստատությունների միջոցով: Ամերիաբանկը ոչ միայն ապահովում է գործող միջազգային կառույցների և զարգացման հիմնադրամների հետ հարաբերությունները, այլև մշտապես աշխատում է նոր միջազգային գործընկերների բացահայտման ուղղությամբ, որոնք հետաքրքրված են Հայաստանի գործարար ոլորտների զարգացմամբ: Նախորդ 7 տարիների ընթացքում Ամերիաբանկն ընդհանուր առմամբ ներգրավել է շուրջ 500 մլն ԱՄՆ դոլար տարբեր միջազգային ֆինանսական հաստատություններից և զարգացման կառույցներից, որոնց թվում են Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ), Հոլանդիայի զարգացման բանկը (FMO), Գերմանական ներդրումների և զարգացման ընկերությունը (DEG), Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ԿԶԵԲ), Եվրասիական զարգացման բանկը (ԵԶԲ), Ասիական զարգացման բանկը (ԱԶԲ), Ավստրիական զարգացման բանկը (ՕԵԵԲ), Պրոպարկո ֆրանսիական գործակալությունը,

Առևտրի և զարգացման սևծովյան բանկը (BSTDB) և ՕՊԵԿ-ը: 2017-ի առաջին կեսը նշանակալից է ակտիվ բանակցային գործընթացներով մի շարք գործընկերների հետ, որոնց արդյունքը հրապարակայնություն կստանա տարվա երկրորդ կիսամյակում: Միջազգային կառույցներից և զարգացման գործակալություններից ներգրավված միջոցներն ուղղվել են փոքր և միջին ձեռնարկությունների, էներգաարդյունավետության/վերականգնվող էներգետիկայի և գյուղատնտեսական նախագծերի ֆինանսավորմանը՝ հստակ ընդգծելով Ամերիաբանկի դիրքորոշումը վերոնշյալ ոլորտների նկատմամբ: Մենք վստահ ենք, որ միջազգային ֆինանսական միջոցներն ուղղելով դեպի այդ ոլորտներ, էապես նպաստում ենք երկրի կայուն տնտեսական աճին: Մեր թիմի կողմից ներգրավված ներդրողների ցանկը չի սահմանափակվում միայն միջազգային ֆինանսական կառույցներով և զարգացման գործակալություններով, այլ ներառում է միջազգային ներկայություն ունեցող խոշոր բանկեր, որոնք համագործակցում են Ամերիաբանկի հետ նաև գործառնական ոլորտում:

Կապիտալի շուկաներ

Ամերիաբանկի պրոֆեսիոնալ թիմը շարունակում է աջակցել իր հաճախորդներին՝ պարտքային և փայտիթրական կապիտալի շուկաներում գործունեություն ծավալող անձանց՝ նրանց առաջարկելով ծառայությունների ամբողջական փաթեթ, որը ներառում է կորպորատիվ պարտատոմսերի թողարկումը, արժեթղթերի առաջնային և երկրորդային տեղաբաշխումը, շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքերի) ծառայություններ և խորհրդատվություն: 2017թ.-ի առաջին կիսամյակի դրությամբ Ամերիաբանկը պահպանել է տեղական կապիտալի շուկաներում առաջատարի իր դիրքերը: Շարունակելով 2016թ.-ին սկիզբ դրած պարտատոմսերի թողարկման գործընթացը 2017թ.-ին Ամերիաբանկը տեղաբաշխեց նոր՝ 15 մլն դոլար արժողությամբ տրանշ: Նույն թվականին հաջողությամբ ավարտվեց 2016թ.-ի Նոյեմբերին թողարկված 5մլն դոլար արժողությամբ պարտատոմսերի տեղաբաշխումը: Արդյունքում Ամերիաբանկի դոլարային պարտատոմսերի ծավալը կազմում է ՆԱՄԴԱՔ ՕԵՄԷՔՍ Արմենիա արժեթղթերի շուկայի դոլարային պարտատոմսերի 38,8%-ը: Առաջին կիսամյակի տվյալներով Ամերիաբանկի թողարկված և տեղաբաշխված պարտատոմսերի ընդհանուր ծավալը դոլարային արտահայտությամբ կազմել է ավելի քան 37 մլն դոլար:

 AMERIABANK	 AMERIABANK
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ \$5,000,000	ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՈՒՄ \$15,000,000
ՏԵՂԱԲԱՇԽՈՂ	ՏԵՂԱԲԱՇԽՈՂ
ՆՈՅԵՄԲԵՐ 2016	ՓԵՏՐՎԱՐ 2017

Միաձուլումներ և ձեռքբերումներ

Ամերիաբանկի Միաձուլումների և ձեռքբերումների բաժինը տրամադրում է ընկերությունների վաճառքի, ձեռքբերման և միաձուլման ծառայությունների համալիր փաթեթ: Թիմը մասնագիտացված է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բիզնեսի գնահատումը, ֆինանսական և կոմերցիոն ստուգումները (due diligence), խորհրդատվությունը և վաճառքի/ ձեռքբերման նախագծերի կառավարումը: 2017թ. առաջին կիսամյակում Միաձուլումների և ձեռքբերումների թիմի հիմնական շեշտը հյուրանոցային և ռեստորանային բիզնեսի (HoReCa), ֆինանսական ծառայությունների, հանքարդյունաբերության, մասնագիտացված

մանրածախ առևտրի, հեռահաղորդակցությունների, առողջապահության և սննդի արդյունաբերության ոլորտներն էին: Ամերիաբանկը մատուցել է խորհրդատվություն տարատեսակ ոլորտներում, ինչպիսիք են՝ անշարժ գույքի, տրանսպորտի և կապի, գյուղատնտեսության և հանքարդյունաբերության ոլորտները: ՀՀ ԿԲ կողմից ընդունված և 2017թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող կապիտալի նվազագույն սահմանաչափը լրացուցիչ խթան էր բանկային ոլորտում վերջին երկու տարիների ընթացքում միաձուլումների և ձեռքբերումների գործընթացների ակտիվացման համար: Չնայած, որ միաձուլումների և ձեռքբերումների հետ կապված սպասումներից հետո մի քանի փոքր գործարքներ տեղի ունեցան, միևնույն է ընդհանուր իրավիճակը ֆուում է կայուն՝ առաջիկա խոշոր ձեռքբերումների ակնկալիքով, որոնք անխուսափելիորեն կհանգեցնեն բանկային ոլորտի կոնսոլիդացմանը:

ԱԿՆԱՐԿ ՆԵՐԴՐՈՒՄ ԱԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առևտրային գործառնություններ

2017թ. 1-ին կիսամյակի տվյալներով Ամերիաբանկն առաջատարներից էր ՀՀ շուկայում առևտրային գործառնությունների ոլորտում: 2017թ. 1-ին կիսամյակում նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ բանկի առևտրային գործառնություններից զուտ եկամուտը աճել է 34.1%-ով՝ զգալիորեն գերազանցելով նախորդ ժամանակաշրջանի 15.1% ցուցանիշը և ունենալով բանկային համակարգի 1-ին կիսամյակի զուտ եկամուտում 13.9% մասնաբաժին: Այս տարվա 1-ին կիսամյակում ՀՀ արտարժույթի շուկան համեմատաբար կայուն էր՝ առանց արտարժույթի փոխարժեքի զգալի տատանումների: Արդյունքում, Բանկը գրանցել է ինչպես հաճախորդների արտարժույթային գործարքների ծավալի, այնպես էլ քանակի աճ: Այսպես, արտարժույթային գործարքների ծավալը աճել է ավելի քան 50%-ով, իսկ արտարժույթային գործարքների քանակային աճը գերազանցել է 40%-ը: 2017թ. 1-ին կիսամյակում Ամերիաբանկը շարունակում էր ակտիվորեն մասնակցել հայկական եվրապարտատոմսերի շուկայի գործունեությանը և շուկայի խոշորագույն մասնակիցներից էր ոչ պետական պարտատոմսերում իրականացված ներդրումների ծավալով:

2017թ. 1-ին կիսամյակում Ամերիաբանկի բրոքերային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը աճել է ավելի քան 10%-ով: Այս ցուցանիշը ավելի քան կրկնակի անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի քանակային աճի ցուցանիշը: Ամերիաբանկը բրոքերային ծառայություններ է

մատուցում 23 երկրի 100-ից ավել մասնագիտացված առևտրային հարթակներում, ինչը հնարավորություն է տալիս իրականացնել տարատեսակ արժեթղթերի առուվաճառք ֆոնդային բորսաներում և մշտապես տեղեկացված լինել ֆինանսական շուկայի զարգացումների մասին: Բացելով բրոքերային հաշիվ Ամերիաբանկում՝ հաճախորդը ստանում է հասանելիություն աշխարհի ամենամեծ ֆոնդային բորսաներին, ինչպիսիք են՝ NYSE-ն, NASDAQ-ը, AMEX-ը, ARCA-ն, CBOT-ը (ԱՄՆ), Տորոնտոյի և Մոնրեալի ֆոնդային բորսաները (Կանադա), LSE-ն, LSE International Order Book-ը (Միացյալ Թագավորություն), Ֆրանկֆուրտի բորսան FWB (Գերմանիա), Վիեննայի բորսան VSE (Ավստրիա), Բրյուսելի Euronext բորսան, Nasdaq OMX Europe NUROEN-ը (Բելգիա), Euronext France-ը (Ֆրանսիա), Շվեյցարիայի ֆոնդային բորսան SWX (Շվեյցարիա), Borsa Italiana-ն (Իտալիա), Մադրիդի բորսան (Իսպանիա), Տոկիոյի բորսան TSE.JPN (Ճապոնիա), Հոնկոնգի բորսան SEHK (Չինաստան), Ավստրալիայի բորսան ASX և այլն: Հաճախորդը հնարավորություն է ստանում իրականացնել տարբեր արժույթներով գնանշվող արժեթղթերի առուվաճառքի գործարքներ և ստանալ միջազգային շուկաների արժեթղթերի գնանշումներն իրական ժամանակում:

ԱԿՆԱՐԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

Տեխնոլոգիաների մշակում

Ամերիաբանկը նպատակ ունի մշտապես կատարելագործել իր հաճախորդներին տրամադրվող ծառայությունների որակը և տրամադրել լրացուցիչ հարմարավետություն: Բանկը թե՛ տեղական, և թե՛ տարածաշրջանային հարթակներում բիզնես ծավալող իր հաճախորդների համար հանդես է գալիս որպես գործընկեր՝ առաջարկելով նորարարական, համապարփակ և բարձրորակ ֆինանսական լուծումներ: Բանկը մշտապես ներդրումներ է կատարում ֆինանսական վերլուծությունների և զարգացման մեջ՝ նպատակ ունենալով բանկային գործարքների մշակումը դարձնել ավելի ճկուն, օպտիմալացնել և էլ ավելի կատարելագործել թվային բանկինգի հաճախորդի փորձառությունը, ինչպես նաև տրամադրել հաճախորդի պահանջներին համապատասխան հատուկ մշակված անհատական ֆինանսական ծառայություններ (օրինակ՝ հատուկ առաջարկ տնտեսության մի շարք ոլորտների աշխատակիցների համար, ուղղորդման պարզեցվածարներ, Էներգախնայող լուծումների ձեռքբերման վարկավորման հատուկ սակագներ և այլն):

Ամերիաբանկի նորարարական քաղաքակա- նությունները հիմնված են հետևյալ սկզբունքների վրա.

- ▶ Նորարարության, Բանկի ռազմավարա- կան նպատակների ու ընթացիկ զարգացման համաձայնեցում,

- ▶ Ուղղվածություն դեպի միջազգային լավագույն փորձը, տեխնոլոգիաների շարունակական արդիականացում և ամենաժամանակակից բանկային լուծումների ներդրում,
- ▶ Հաճախորդամետ մոտեցում և անհատա- կան ժամանակակից լուծումներ:

Հավատարիմ ֆալով վերը նշված սկզբունքներին՝ Ամերիաբանկը կարճ ժամանակում դարձավ Հայաստանի բանկային համակարգի առաջատարներից մեկը: Այսօր Ամերիաբանկը հզոր ֆինանսական հաստատություն է, որն իր հաճախորդների կողքին է՝ որպես հուսալի գործընկեր՝ պատրաստ դիմակայելու ցանկացած մարտահրավերի ու քայլել ժամանակին համընթաց, հանդես գալ աննախադեպ նորարար լուծումներով ու ամենաարդի տեխնոլոգիաներով:

Հաճախորդների փորձառություն և բարելավումներ

Համընթաց քայլելով արդի բանկային տեխնոլոգիաների հետ՝ Ամերիաբանկը նպատակ է հետապնդում իր հաճախորդներին տրամադրել առավել նորարար լուծումներ: 2017թ. առաջին կիսամյակի ընթացքում Բանկն իրականացրեց մի շարք ներքին և արտաքին բարելավումներ, որոնց հետևանքով թե՛ բանկային, և թե՛ որոշ ոչ բանկային ծառայություններից օգտվելը դարձավ էլ ավելի

հասանելի և հարմարավետ: Հասանելիության տեսանկյունից Ամերիաբանկն ընդլայնեց իր ԱԳՄ-ների, վճարային տերմինալների, կանխիկի մուտքագրման և ելքագրման սարքերի ցանցը (մանրամասների համար՝ «Աշխարհագրական տարածում» հատվածը): Բանկը ընդլայնեց ՀՀ Արդարադատության նախարարության պետական ծառայությունների մատուցման միասնական գրասենյակի ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունները՝ քաղաքացիներին հնարավորություն ընձեռելով ստանալ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման, իրավաբանական անձանց գրանցման վերաբերյալ տեղեկանքներ և այլ փաստաթղթեր անմիջապես Ամերիաբանկի համապատասխան մասնաճյուղից:

2017 թ. առաջին կիսամյակի ընթացքում հերթերի կառավարման համակարգը տեղադրվել է Երևանի ևս երկու մասնաճյուղում: Որպես իր գործունեության հիմնարար ուղղություն, Ամերիաբանկն այժմ CR2 BankWorld հարթակի ներդրման վերջին փուլում է գտնվում: Այս համակարգը ոչ միայն զգալիորեն կբարելավի հաճախորդների փորձառությունը թվային բանկային ծառայությունների բնագավառում, այլև կներկայացնի ֆինանսական համակարգի համար լիովին նոր գործիքներ:

Բանկն իր զարգացման առաջնահերթ նպատակների շարքում մշտապես կարևորել է

ԱԿՏԱՐԿ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄ

թվայնացված ծառայությունների շարունակական բարելավումը՝ դրանք հաճախորդների համար առավել հասանելի ու ոլորին դարձնելով: Բանկը զգալիորեն բարելավել է ինտերնետային և հեռախոսային բանկային ծառայությունները՝ հիմնականում շեշտադրելով հաճախորդների շրջանում առավել մեծ պահանջարկ ունեցող գործառնությունները: Սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու, հերթերի կառավարումը հեշտացնելու նպատակով իրականացվեց գործողությունների մի ամբողջ համալիր, մասնավորապես՝ Երևանում գործող մասնաճյուղերում ներդրվեց հերթերի կառավարման համակարգ: Նպատակ ունենալով բարելավել սպասարկման որակը և բարձրացնել ժամանակի կառավարման արդյունավետությունը՝ 2017թ. Ամերիաբանկը ներդրել է հերթերի կառավարման համակարգի բջջային հավելված: EarlyOne բջջային հերթերի կառավարման համար նախատեսված հավելվածի միջոցով հաճախորդները կարող են հերթագրվել՝ նախքան Բանկ այցելելը և խուսափել հերթերից:

Նոր ֆինանսական լուծումներ

Ամերիաբանկը նաև աշխատում է հաճախորդներին տրամադրել հատուկ մշակված ֆինանսական լուծումներ, որոնք լավագույնս կբավարարեն կոնկրետ հաճախորդների սեգմենտներին:

Մասնավորապես, Բանկը շուկայում ներկայացրել է մի քանի նոր ծառայություններ՝

- ▶ 2017 թ. առաջին կիսամյակում Ամերիաբանկը ընդլայնեց ԱՅՈ հետվճարային ծրագրում ներգրավված գործընկեր առևտրի և սպասարկման կետերի ցանկը:
- ▶ Ամերիաբանկը մշակել է հատուկ առաջարկ տնտեսության մի շարք առանցքային ոլորտների համար՝ հաշվի առնելով առկա պահանջները: 2017 թվականին թարմացվել է Տնտեսության ոլորտների ցանկը՝ համապատասխանեցնելով տնտեսության առանցքային ոլորտների աշխատակիցների պահանջներին:
- ▶ VISA ընկերության հետ համատեղ իրականացվել արշավ, որն ուղղված էր միջին սեգմենտի հաճախորդների քարտով կատարվող անկանխիկ գործարքների ավելացմանը:
- ▶ Բանկը ՎՉԵԲ-ի հետ համատեղ՝ հանդես եկավ վարկավորման նոր առաջարկով, որը նախատեսված է կանանց կողմից վարվող բիզնեսը զարգացնելու համար: Բանկը նախատեսում է հետագայում ևս ընդլայնել այս ուղղությամբ իր գործունեության շրջանակները՝ նպատակ ունենալով բարենպաստ պայմաններ ստեղծել գործարար կանանց համար:


Աշխարհագրական տարածում

Ամերիաբանկը մասնաճյուղեր ունի Հայաստանի խոշոր քաղաքներում և մարզկենտրոններում՝ «Վանաձոր» (Լոռի), «Դիլիջան» (Տավուշ),

«Քաջարան» (Սյունիք), «Կապան» (Սյունիք), «Գյումրի» (Շիրակ), ինչպես նաև 8 մասնաճյուղ և Գլխամասային գրասենյակը մայրաքաղաքի ամենաբանուկ վայրերում: Բոլոր մասնաճյուղերի և Գլխամասային գրասենյակի միջև կապն ապահովվում է առցանց ռեժիմով՝ թույլ տալով Բանկի հաճախորդներին մշտապես բարձրակարգ սպասարկում ստանալ ցանկացած մասնաճյուղում՝ անկախ նրանից, թե որ մասնաճյուղում են հաշիվ բացել:

2017թ. Ամերիաբանկը բացեց նոր մասնաճյուղ Գյումրի քաղաքում՝ «Կումայրի» մասնաճյուղը՝ քաղաքի ամենաբանուկ կենտրոնական հատվածում: Բացի մասնաճյուղի բացումից Բանկը տեղակայեց նաև մի քանի ինքնասպասառման սարքեր ոչ միայն մասնաճյուղին հարակից հատվածում, այլև քաղաքի այլ վայրերում: Ավելին, մասնաճյուղերի ցանցի զարգացմանը զուգընթաց՝ Ամերիաբանկը Երևանում տեղադրել է շուրջօրյա ինքնասպասարկման տերմինալներ (express banking)՝ հաճախորդների համար առավել հարմարավետ դարձնելով հեռահար բանկային ծառայությունները:

2017թ. վերջի դրությամբ տեղադրված բանկոմատների ընդհանուր թիվը կազմում է 120, POS տերմինալների քանակը՝ 1,377, POS Cash տերմինալներինը՝ 33, իսկ վիրտուալ տերմինալներինը (vPOS)՝ 212:



ԿԵՆՏՐՈՆԱՆԱԼ

ՏԵՍԼԱԿԱՆԻ ԿՐԱ՝ ՄԵԾ ՀԵՌԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԻՏԱՐԿԵԼՈՎ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՄՈՏԻԿԻՑ՝ ԱՐԺԵՔՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



Մակրոտնտեսական նախադրյալներ

2016թ. Հայաստանի բանկային համակարգը կրում էր տարածաշրջանի բացասական մակրոտնտեսական ազդեցությունը՝ պայմանավորված շարունակվող բացասական տարածաշրջանային միտումներով, ինչպես նաև դեռևս 2014թ. Ռուսաստանի տնտեսության վիճակով և զարգացող երկրների տնտեսական խնդիրներով: 2009թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամից հետո ՀՀ տնտեսությունը 2010-2015թթ. աստիճանաբար վերականգնվում էր՝ տարեկան միջինում աճելով 4%-ով, մինչդեռ 2016թ. տնտեսական աճը կազմեց ընդամենը 0.2% 2017թ.-ը թե՛ միջազգային և թե՛ ներքին կանխատեսումների համաձայն ակնկալվում է լինել տնտեսական աճի տեսանկյունից 2016թ. համեմատ առավել մեծ ձեռքբերումների տարի: Ավելին, 1-ին եռամսյակի արդյունքների համաձայն, գրանցվել է ՀՀ տնտեսության մոտ 6.5% աճ, ինչը մոտ 4 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի համեմատ: 2017թ.-ի 1-ին կիսամյակի համար երկրի տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 6.1%: Մոտակա 2-3 տարվա կանխատեսումները աճի չափավոր տեմպեր են խոստանում: Ըստ միջազգային կազմակերպությունների կանխատեսումների (Արժույթի միջազգային հիմնադրամ, Համաշխարհային բանկ, ՎԶԵԲ)՝ 2017թ. տնտեսական աճը կկազմի 2.5-2.9%: ՀՀ տնտեսության զարգացումը մեծապես կախված է Ռուսաստանի՝ Հայաստանի հիմնական առևտրային գործընկերոջ, տնտեսական վիճակից: Ռուսաստանից կախվածությունն ավելի խորացավ

Հայաստանի՝ ԵՏՄ-ին անդամակցելուց հետո (2015թ. հունվարին): Մասնավորապես, ԵՏՄ-ին միանալուց հետո Հայաստանն սկսեց օգտվել մաքսային և այլ արտոնություններից, սակայն Ռուսաստանում տնտեսական խնդիրների և ներմուծման ծավալի կրճատման պատճառով դրանք սպասվածից պակաս արդյունավետ էին: Ռուսաստանում գործունեություն ծավալող Հայաստանի քաղաքացիների մասնավոր փոխանցումները մեծ ազդեցություն ունեն Հայաստանի տնտեսության վրա: Չնայած, Ռուսաստանի տնտեսության անկմամբ պայմանավորված, 2016թ.-ին Ռուսաստանից Հայաստան կատարվող մասնավոր փոխանցումների ծավալը շարունակեց կրճատվել, , 2017թ.-ի 1-ին կիսամյակի արդյունքների համաձայն, վերջինս գրանցել է 16.4% աճ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ (2015թ.-ի 1-ին կիսամյակի համեմատ՝ 6.2%-ի): Երկու տարի անընդմեջ գրանցված գնանկումից հետո, 2017թ.-ի 1-ին կիսամյակում (տարվա սկզբից նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ) սպառողական գների ինդեքսը կազմել էր 100.5%, որը գնաճի կանխատեսված շեմից ցածր էր (4% ± 1.5%) , իսկ 2016թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 1.2%: 2017թ.-ին ինդեքսի կտրուկ տատանումներ չեն նախանշվում, այն կլինի գնաճի կանխատեսված սահմաններում: 2017թ.-ի 1-ին եռամսյակի անվանական ՀՆԱ-ն կազմեց 971.9 միլիարդ ՀՀ դրամ՝ գրանցելով մոտ 6.5% աճ նախորդ տարվա համապատասխան

ժամանակաշրջանի նկատմամբ՝ զգալի բարելավելով 2016թ. ցուցանիշը (2016թ. 1-ին եռ. նշված ցուցանիշը կազմել է 4.7%, 2015թ. 1-ին եռ.՝ 3.4%, 2014թ. 1-ին եռ.՝ 3.0%): Աճը հիմնականում պայմանավորված է եղել խմիչքների արտադրության, հիմնական մետաղների, հարկերի և ֆինանսական և ապահովագրական ոլորտներում գրանցված ցուցանիշներով: ՀՆԱ-ի արտադրության բաղադրիչ կազմող ոլորտներից համեմատաբար զգալի աճ գրանցվել է կացության և հանրային սննդի կազմակերպման (36.6%), ֆինանսական և ապահովագրական գործունեության (18.3%), մշակող արդյունաբերության (15.4%), էլեկտրականության, գազի, զոլորշու և լավորակ օդի մատակարարման ոլորտներում (11.7%): Հարկ է նշել, որ աճի տեսանկյունից անհրաժեշտ է հաշվի առնել նաև ոլորտների մասնաբաժինը ՀՆԱ-ի աճի մեջ: Ինչպես արդեն նշեցինք, 2017թ.-ին ակնալվում է ՀՆԱ-ի չափավոր աճ, ինչը նաև պայմանավորված է ամսական տնտեսական աճի ցուցանիշի դրական միտումներով: Մասնավորապես, 2017թ. հունվար-հունիս ամիսների արդյունքներով ՀՀ-ում գրանցվել է 6.1% տնտեսական աճ: 2017թ.-ի 1-ին կիսամյակում 2016թ.-ի նույն ժամանակահատվածի համար առևտրի շրջանառությունն աճել է 12.6%-ով՝ հիմնականում պայմանավորված մեծածախ առևտրի և ավտոմեքենաների առևտրի ոլորտներում գրանցված համապատասխանաբար 20.3% և 21. % աճով: Միևնույն ժամանակ արդյունաբերական արտադրանքի ծավալն աճել է 12.4%-ով,

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԻԶԱՎԱՅՐ

Մակրոտնտեսական նախադրյալներ

մասնավորապես հանքարդյունաբերության ոլորտը գրանցել է մոտ 8.9% աճ՝ հիմնականում ի հաշիվ հանքգործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղերում գրանցված արտադրության ծավալների 40.1%-ով: Միաժամանակ մշակող արդյունաբերության ոլորտում նկատվել է մոտ 17.5% աճ՝ հիմնականում պայմանավորված ծխախոտի արտադրության շարունակական աճի (24.6%), սննդի և ըմպելիքների արտադրության ոլորտում աճի տեմպերի վերականգման (8.5% և 23.5% համապատասխանաբար), ինչպես նաև հիմնային մետաղների արտադրության 18.7% աճի: Տնտեսական ակտիվության դրական ցուցանիշին նպաստել է ծառայությունների ծավալի (առցանց առևտրի) 10.9% աճը: Միաժամանակ նկատվել է գյուղատնտեսության և շինարարության ոլորտների համապատասխանաբար 1.4% և 10% անկում: Գյուղատնտեսության ոլորտում անկումը ինչպես և 2016թ. պայմանավորված է եղանակային համեմատաբար անբարենպաստ պայմանների արդյունքում մշակաբույսերի աճեցման ենթաճյուղում գրանցված անկմամբ, իսկ անասնապահություն ու ձկնաբուծությունը շարունակել են աճել: Այնուամենայնիվ կանխատեսուժների համաձայն այս ոլորտը կշարունակի աճել՝ շնորհիվ արդյունաբերական գյուղատնտեսության զարգացման և կառավարության՝ ոլորտի զարգացումը խթանող մի շարք ծրագրերի իրականացման: ԵՏՄ անդամակցությունը, ինչպես նաև արևմտյան երկրներից Ռուսաստան գյուղմթերքի ներկրման եմբարգոն, նպաստում են հայկական ապրանքների

արտահանմանը դեպի Ռուսաստան և խթանում Հայաստանում գյուղմթերքի արտադրությունը: 2017թ. 1-ին կիսամյակում երկրի արտաքին առևտրաշրջանառության ծավալը գրանցել է մոտ 24% աճ, մասնավորապես արտահանումն աճել է 21%-ով, իսկ ներմուծումը՝ 25.8%: Չնայած 2016թ. արտահանման երկնիշ աճը պահպանվել է 2017թ. 1-ին կիսամյակում ևս, այնուամենայնիվ միևնույն ժամանակ գրանցվել է նաև ներմուծման ծավալների երկնիշ, արտահանման համեմատ առաջանցիկ, աճ, ինչի արդյունքում գրանցվել է արտաքին առևտրի պակասորդի աճ: Հարկ է նշել, որ 2016թ. գրանցվել էր հակառակ միտումը, այնուամենայնիվ արտահանման երկնիշ աճի պահպանման շնորհիվ ներկրման ծավալը դուրային արտահայտությամբ 2017թ. 1-ին եռամսյակում ևս գերազանցում էր արտահանման ծավալն ընդամենը 1.8 անգամ, ինչը ամենացածրն է վերջին ավելի քան 22 տարվա կտրվածքով: Արտաքին առևտրային հաշվեկշռի 2016թ. սկսված կրճատման միտման վերականգնումը կարող է լուրջ մարտահրավեր լինել՝ ենթադրելով արտահանվող ապրանքների և ծառայությունների կառուցվածքի փոփոխություն: Ընթացիկ վճարային հաշվեկշռի պակասորդը պահպանել է նվազման միտումը՝ պահպանելով պակասորդ/ՀՆԱ հարաբերակցության ցածր ցուցանիշը: 2017թ. 1-ին եռամսյակում Հայաստանի արտաքին պարտքը բացարձակ արժեքով կազմել է 4827.5 մլն ԱՄՆ դոլար: 2016թ. վերջինս կազմում էր ՀՆԱ-ի 45.5%-ը՝ 2015թ. 41%-ի համեմատ, գումարային արտահայտմամբ՝ 4,798 մլն ԱՄՆ դոլար (11.2% աճ անվանական արժեքով՝ դուրային արտահայտմամբ):

Աճը պայմանավորված է Կառավարության կողմից վերցրած մի շարք խոշոր վարկերով՝ անկման շրջանում տնտեսության զարգացմանը սատարելու համար: Կանխատեսելով անկումը՝ ՀՀ կառավարությունը դեռևս 2015թ. 1-ին եռամսյակում տեղաբաշխել էր լրացուցիչ 500 մլն ԱՄՆ դոլարի եվրապարտատոմսեր՝ 7.15% արժեկտրոնային եկամտաբերությամբ (նախկին 6%-ի համեմատ) և 10 տարի մարման ժամկետով (2025թ. մարտին, նախորդը՝ 2020թ. սեպտեմբերին) և հետ գնել 200 մլն դոլարի պարտատոմսեր նախորդ թողարկումից: Նշենք, որ 1-ին թողարկումը տեղի էր ունեցել 2013թ.՝ 700 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր արժեքով: Արտաքին պարտք/ՀՆԱ հարաբերակցությունն ըստ միջազգային կազմակերպությունների բարձր ռիսկի գոտում է, անգամ եթե հաշվի առնենք 2015թ. նոր պարտքի ներգրավումը: Ավելին, արտաթույլ լատարված պահուստավորումն ըստ ստանդարտ չափանիշների, ընդունելի մակարդակի վրա է: 2016թ. վերջի դրությամբ նշված պահուստների ծավալը կազմել է 2.2 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա համեմատ աճել է 24%-ով), ինչը հավասար է մոտ 8 ամսվա արտահանման ծավալին՝ ի տարբերություն սահմանված 3 ամսվա չափանիշի: Հայաստանը շարունակում էր ակտիվորեն համագործակցել միջազգային կառույցների հետ և տեղաբաշխել ներգրավված միջոցները (ՀԲ, Արժույթի միջազգային հիմնադրամ, ԱԶԲ, ԵՄ): Մասնավորապես, 2016թ. ՀԲ աջակցությամբ իրականացվում էր 18 նախագիծ տնտեսության տարբեր բնագավառներում: Ծրագրերն իրականացվում էին բազմաթիվ ոլորտներում՝ ճանապարհաշինություն, էներգետիկա, գյուղատնտեսություն, կրթություն, առողջապահություն,

ռոռզման համակարգեր, գյուղական համայնքների զարգացում, հանրային կառավարում և դատական համակարգ: 2017թ. ևս ՀԲ մեկնարկել է 2 նոր նախագիծ՝ ՀՀ-ում ուղղված Ազգային վիճակագրական համակարգի զարգացմանը և գյուղատնտեսական քաղաքականության մոնիտորինգի և գնահատման հնարավորությունների ձևավորմանը: Ասիական զարգացման բանկի մշակած՝ 2016-2018թթ. երկրի գործառնությունների բիզնես պլանը (ԵԳԳ) կազմվել է այնպես, որ ներդաշնակ լինի ՀՀ 2014-2025թթ. զարգացման ռազմավարությանը և Կառավարության՝ 2014-2017թթ. ծրագրին: ԵԳԳ-ն համահունչ է ԱԶԲ-ի 2020թ. Ռազմավարության միջնաժամկետ գնահատմամբ նախանշված առաջնահերթ խնդիրներին, ինչպես նաև ԱԶԲ-ի մշակած՝ Հայաստանի՝ 2014-2018թթ. գործընկերության ռազմավարությամբ սահմանված առաջնային նպատակներին: 2017թ. 1-ին եռամսյակում ԱԶԲ-ի ՀՀ-ում մեկնարկած ծրագրերը ներառում են բաշխիչ ցանցերի (Հայաստանի էլեկտրական ցանցերի) վերականգնմանը, արդյունավետության բարձրացմանն ու ընդլայնմանը և հանրային արդյունավետության և ֆինանսական շուկաների աջակցությանն ուղղված ծրագրեր: Հայաստանում ՎԶԲ-ի քաղաքականությունն ուղղված է հետևյալ ռազմավարական նպատակների իրականացմանը. մասնավոր հատվածի մրցունակության բարձրացում՝ կարողությունների ամրապնդման, ընկերությունների թափանցիկության բարձրացման և գործարար միջավայրի բարելավման միջոցով, կապիտալ շուկաների

զարգացում, ազգային արժույթով ֆինանսավորման խրախուսում, կայուն և առևտրայնացված կոմունալ ծառայությունների զարգացում: Վերջին տարիների ընթացքում ՀՀ ձեռնամուխ է եղել երկրում ներդրումային և գործարար միջավայրի բարելավմանը: Արդյունքում ՀԲ Doing Business 2017 զեկույցում Հայաստանը նախորդ տարվա համեմատ 5 կետով բարելավեց իր դիրքը՝ զբաղեցնելով 38-րդ հորիզոնականը: Բացի այդ, Հայաստանը նաև 3 կետով բարելավեց իր դիրքը Համաշխարհային տնտեսական ֆորումի 2016-2017թթ. մրցունակության ինդեքսում՝ զբաղեցնելով 79-րդ հորիզոնականը, ինչպես նաև Heritage Foundation հետազոտական կենտրոնի կողմից հրապարակված՝ 2017թ. տնտեսական ազատության ինդեքսում զբաղեցնելով 33-րդ հորիզոնականը նախորդ 54-րդ հորիզոնականի փոխարեն և «չափավոր ազատ» երկրների խմբից տեղափոխվելով «հիմնականում ազատ» երկրների խումբ:

ՀՀ բանկային համակարգ

2017թ. 1-ին կիսամյակում ՀՀ-ում շարունակել են գործել 17 առևտրային բանկ: Ինչպես հայտնի է, ընդառաջ գնալով 2017թ. հունվարի 1-ից պարտադիր դարձած՝ նվազագույն նորմատիվային կապիտալի նոր պահանջներին*՝ 2016թ. ՀՀ բանկային համակարգը ականատես եղավ կապիտալի համալրման, ինչպես նաև բանկերի միավորման գործընթացներին, արդյունքում 2016թ. վերջում գործող 21 առևտրային բանկից Հայաստանում ծնաց 17 բանկ: 2017թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում միաձուլուժների և/կամ կլանուժների նոր գործարքներ ՀՀ բանկային համակարգում չեն գրանցվել:

2017թ. 1-ին կիսամյակի վերջում օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում կազմել է 60.8%:՝ Միաձուլման հետևանքով շուկայից հեռացած չորս բանկերից երեքն ունեին օտարերկրյա բաժնետերեր. 2015թ. դեկտեմբերին նշված ցուցանիշը կազմում էր 67.7%:

Մնացած բանկերը կամ արդեն ունեին բավարար կապիտալ՝ նորմատիվային պահանջին համապատասխանելու համար, կամ լրացուցիչ միջոցներ ներգրավեցին գործող կամ նոր ներդրողներից:

Այսպես, ճիշտ ժամանակին կանխատեսելով երկրի տնտեսական վիճակի հետագա վատթարացումը՝ ՀՀ ԿԲ-ն իր որոշմամբ պարտավորեցրեց

բանկերին բարելավել իրացվելիության գործակիցները, ինչը փոքր և թույլ տնտեսության պայմաններում կարևոր քայլ էր՝ արտակարգ իրավիճակներից ապահովագրվելու համար: Թեև արդյունքում երկիրը հավելյալ ծախսեր կրեց, շուկան լքեցին հենց թույլ մասնակիցները, որոնց կլանեցին ավելի առողջ, ամուր և ագրեսիվ բանկերը:

Նշված փոփոխությունները թույլ տվեցին ամրապնդել բանկային համակարգի ֆինանսական կայունությունը, բարձրացնել բանկերի մրցունակությունը և նրանց դերը տնտեսությունում, քանի որ ընդլայնվել են լայնածավալ ծրագրերի ֆինանսավորման հնարավորությունները, և նոր հիմքեր են ստեղծվել ֆինանսական ծառայություններն ավելի հասանելի դարձնելու համար:

Հայաստանի տնտեսությունը բավականին կենտրոնացված բնույթ ունի, և փոքր բանկերն ի վիճակի չեն ադեկվատ կերպով բավարարել իրական հատվածի պահանջներն ու կարիքները: Տնտեսության գրեթե բոլոր ոլորտների առաջին երկու-երեք խաղացողները չափով ավելի մեծ են, քան ցանկացած հայկական բանկ, այդ իսկ պատճառով ոչ մի բանկ միայնակ ի վիճակի չէ սպասարկել նման խոշոր հաճախորդների, սա ևս մեկ կողմ փաստարկ է խոշորացման համար:

Ավելին, բանկերի խոշորացումը կնպաստի նոր

Ավելին, բանկերի խոշորացումը կնպաստի նոր բանկային տեխնոլոգիաների ավելի արագ ներդրմանը: Փոքր բանկերն անգամ, եթե համապատասխանեին բոլոր նորմատիվային պահանջներին, շատ շուտ կկորցնեին իրենց մրցակցային առավելությունները՝ չունենալով նորամուծություններ ներդնելու նույն ֆինանսական հնարավորությունները, ինչ խոշոր բանկերը: Մի շարք փորձագետներ կանխատեսում են, որ առաջիկայում Հայաստանում սպասվում է բանկերի միաձուլման երկրորդ ալիքը: Այդպես բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն շեմի բարձրացումը կարող է ՀՀ բանկային համակարգի լայնածավալ կառուցվածքային փոփոխությունների սկիզբը դնել: 2017թ. 1-ին կիսամյակի արդյունքների համաձայն ՀՀ բանկերի օրգանական աճը շարունակվել է, որի մասին վկայում են ակտիվների, վարկավորման ծավալի և պարտավորությունների ցուցանիշների դրական փոփոխությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ:

Նպատակ ունենալով խթանել թե՛ իրական հատվածի, և թե՛ բանկային համակարգի զարգացումը, 2017թ.-ի 1-ին կիսամյակի ընթացքում նկատվել է սահմանափակող քաղաքականության հետագա որոշակի մեղմացում, մասնավորապես փետրվար ամսին վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցվել է 0.25 տոկոսային կետով կազմելով 6%:

Հայաստանում գործող ֆինանսական հաստատությունները

	2016	2017 I կա.
 Բանկեր, այդ թվում	19	18
Առևտրային բանկեր Համահայկական բանկ ³	18 ² 1	17 1
 Վարկային կազմակերպություններ	34	34
 Ապահովագրական ընկերություններ	7	7
 Հիմնադրամներ, ներառյալ	12	16
▶ Կենսաթոշակային	8	8
▶ Ներդրումային	2	7
▶ Վենչուրային	2	1

³Համահայկական բանկը ձեռնարկությունների զարգացման բանկ է, որը տրամադրում է երկարաժամկետ ֆինանսավորում արտահանմամբ զբաղվող մասնավոր ընկերությունների ներդրումային նախագծերի համար: Անհրաժեշտ ֆինանսական միջոցները բանկը ներգրավում է զարգացման զանազան տեղական և արտասահմանյան կազմակերպություններից:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՐԻԱԲԱՆԿԻ ԴԻՐՔԸ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանկային համակարգի երկնիշ աճ

Կենտրոնական բանկի կողմից կապիտալի նվազագույն շեմը 6 անգամ ավելացնելուց և 30 մլրդ ՀՀ դրամի հասցնելուց հետո 2016թ. շուկայում ակտիվորեն շարունակվում էին կապիտալացման նպատակով միջոցների ներգրավման և բանկերի միավորման գործընթացները: 2017թ. 1-ին կիսամյակի արդյունքների համաձայն բանկերի կապիտալը վերջին 12 ամիսների ընթացքում աճեց մոտ 14%-ով: Կապիտալի աճին զուգահեռ վերջին 12 ամիսների կտրվածքով գրանցվել է նաև ակտիվների և պարտավորությունների երկնիշ աճ: Այսպես, 2017թ. 1-ին կիսամյակում բանկերի ակտիվներն աճել են 18.9%-ով՝ կազմելով 4.2 տրիլիոն ՀՀ դրամ, իսկ վարկային ներդրումներն ավելացել են 18.5%-ով՝ կազմելով 2.6 տրիլիոն ՀՀ դրամ: Բանկերի պարտավորությունները մեկ տարվա ընթացքում աճել են 19.9%-ով մինչև 3.5 տրիլիոն ՀՀ դրամ: Պարտավորությունները հաճախորդների նկատմամբ ավելացել են 26.6%-ով՝ կազմելով 2.4 տրիլիոն ՀՀ դրամ: Բանկային համակարգի համախառն շահույթը ևս 2017թ. հունվար – հունիս ամիսներին գրանցել է երկնիշ աճ՝ կազմելով 19.2 մլրդ ՀՀ դրամ 2016թ. նույն ժամանակահատվածի 12.3 մլրդ ՀՀ դրամի համեմատ: 2017թ. ընթացքում ֆաստով է աշխատել միայն մեկ բանկ, 2016թ. 4 բանկի համեմատ: 2017թ. 1-ին կիսամյակի արդյունքներով առանց ֆաստի՝ շահութաբեր բանկերի շահույթը կազմել էր 23.7 մլրդ ՀՀ դրամ:

Ֆինանսական միջնորդության մակարդակի աճ

Դանդաղ տնտեսական աճը և վարկավորման ակտիվացումը նպաստել են Հայաստանում ֆինանսական միջնորդության մակարդակի բարձրացմանը և իրական հատվածի համար բանկային համակարգի դերի ամրապնդմանը: Արդյունքում թե՛ Հայաստանի ամբողջ ֆինանսական համակարգը, թե՛ բանկային հատվածն ունեն բարձր իրացվելիություն և տնտեսության տարբեր ճյուղերի հեռանկարային ծրագրերը ֆինանսավորելու համար անհրաժեշտ կապիտալ՝ չվտանգելով ֆինանսական կայունությունը: Դրա մասին են վկայում ՀՀ ԿԲ սահմանած նորմատիվային ցուցանիշները, որոնք ապացուցում են, որ բոլոր բանկերն ունեն տնտեսությունը ֆինանսավորելու և նոր ֆինանսական միջոցներ կուտակելու բարձր ներուժ: ՀՀ բանկերն ունեն կայունության բավականին մեծ պաշար՝ ճգնաժամին դիմակայելու համար:

- ▶ Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմում է 19.48՝ ի համեմատ ԿԲ կողմից սահմանված 12% նվազագույն շեմի:
- ▶ Իրացվելիության ցուցանիշները նույնպես բավականին բարձր են՝ Ն2.1՝ 32.1%, Ն2.2՝ 161.7%:
- ▶ Հաճախորդների վարքագիծը ևս վկայում է բանկերի հուսալիության մասին: 2017թ. 1-ին

կիսամյակում վերջին 12 ամսվա կտրվածքով հաճախորդների նկատմամբ պարտավորություններն ավելացան 26.6%-ով, 2016թ. նշված ցուցանիշը կազմել էր 24.1%-ով, մինչդեռ 2015թ. աճը կազմել էր 10.9%:

Վարկային պորտֆելի որակ

2017թ. 1-ին կիսամյակում ևս նկատվեց վարկային պորտֆելի որակի բարելավում: Բանկերը կարողացան ոչ միայն կանխել վարկային պորտֆելի հետագա վատթարացումը, այլև մասամբ նվազեցնել ժամկետանց վարկերի թիվը: Դա հնարավոր դարձավ անհուսալի վարկերի դուրսգրման, վարկավորման ծավալի աճի, ինչպես նաև մասամբ՝ ժամկետանց վարկերի վերադարձի շնորհիվ:

Հարկ է նշել, որ ըստ ՀՀ ԿԲ տվյալների Հայաստանի բանկային ոլորտում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը կազմում է 60.8%: Հայկական բանկային հատվածի նկատմամբ վստահության և հետաքրքրության մասին են վկայում նաև միջազգային ֆինանսական հաստատություններից ներգրավված երկարաժամկետ միջոցները՝ ուղղված Հայաստանի տնտեսության զարգացմանը և համատեղ ծրագրերի իրականացմանը:

Տեխնոլոգիաների մշակում

2017թ. 1-ին կիսամյակում Ամերիաբանկը պահպանել է աճի բարձր տեմպերը՝ հիմնականում առաջ անցնելով բանկային համակարգից:

- ▶ 2013թ.-ից ի վեր Ամերիաբանկը բանկային համակարգի առաջատարն է ակտիվների ծավալով, ընդ որում Բանկի՝ շուկայի մասնաբաժինը շարունակաբար աճում է: 2015թ. Ամերիաբանկի ակտիվները հատեցին 500 մլրդ ՀՀ դրամի (1 մլրդ ԱՄՆ դոլարի) սահմանը, ինչն աննախադեպ երևույթ էր ՀՀ բանկային համակարգում: 2017թ. 1-ին կիսամյակի արդյունքների համաձայն Բանկի ակտիվները կազմում էին արդեն 653 մլրդ ՀՀ դրամ, որը համարժեք է 1.4 մլրդ ԱՄՆ դոլարին: Նախորդ 12 ամիսների կտրվածքով Ամերիաբանկի ակտիվներն աճել են շուրջ 25.1%-ով: Արդյունքում Բանկի մասնաբաժինը շուկայում հասավ 15.7%-ի՝ 2016թ. համապատասխան ժամանակահատվածի 14.9%-ի համեմատ: Բանկային ոլորտի ընդհանուր աճը կազմեց 18.9%:
- ▶ 2015թ.-ից ի վեր Ամերիաբանկը գլխավորում է ՀՀ բանկերի ցուցակը ընդհանուր կապիտալի մեծությամբ՝ նոր ներդրողի շնորհիվ, իսկ 2017թ. 1-ին կիսամյակի արդյունքների համաձայն Բանկի մասնաբաժինը շուկայում

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ-ՄՈԴԵԼ

հասավ 10.1%՝ հետագա ամրապնդելով իր դիրքը: Բանկը պահպանեց և ամրապնդեց իր դիրքը ըստ կանոնադրական կապիտալի առաջատար բանկերի շարքում: Վերջին 12 ամիսների կտրվածքով Ամերիաբանկի ընդհանուր կապիտալն ավելացավ 7.5 մլրդ ՀՀ դրամով կամ 12.5%-ով: Ընդհանուր աճը բանկային համակարգում կազմեց 13.9%: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճեցին 92.7 մլրդ ՀՀ դրամով կամ 31.7%-ով: Բանկն առաջատարն է նաև այս ցուցանիշով՝ շուկայի 15.9% մասնաբաժնով՝ 2016թ. համապատասխան ժամանակահատվածի 15.3%-ի համեմատ: Ընդհանուր աճը բանկային համակարգում կազմել է 26.6%:

- ▶ Նախորդ 12 ամսվա կտրվածքով Բանկի տրամադրած վարկերի ծավալն ավելացել է 69.5 մլրդ ՀՀ դրամով կամ 19.5%-ով, ինչի արդյունքում Բանկի՝ շուկայի մասնաբաժինը կազմեց 16.3%՝ նախկին 16.2%-ի համեմատ: Բանկային համակարգում ընդհանուր աճը կազմել է 18.5%:
- ▶ Բանկի շահույթը մոտ 3 անգամ գերազանցում է շուկայի միջին շահույթի ցուցանիշը և մոտ

2.5 անգամ՝ շահութաբեր բանկերի շահույթի միջին ցուցանիշը:

- ▶ Ամերիաբանկի ROA և ROE ցուցանիշները գերազանցում են բանկային ոլորտի միջին ցուցանիշները:


Միջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության ընդլայնումը (այդ թվում կապիտալում ուղղակի ներդրումների ձևով) ստեղծել է բոլոր պայմանները Բանկի հետագա աճի և 2017թ. ՀՀ տնտեսության՝ աննախադեպ ծավալով վարկավորման համար:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԻԶՆԵՍ-ՄՈԴԵԼ

2016 թվականին Ամերիաբանկը պահպանեց իր բարձր աճի տեմպերը: Բանկն ամրապնդեց իր դիրքերը ՀՀ առաջատար բանկերի շարքում, վերահաստատեց իր դերը որպես կայուն, ժամանակակից, իրացվելի, արագ աճող և մրցունակ ֆինանսական հաստատություն՝ հետագա աճի և զարգացման հսկայական ներուժով:

Առանձնակի ուշադրություն դարձնելով հաճախորդների պահանջների բավարարմանը՝ Բանկն արդեն իսկ ամուր դիրք է գրավել որպես առաջատար ըստ նորարարության և սպասարկման չափանիշների: Մենք մշտապես կատարելագործում ենք աշխատանքի կազմակերպման, կորպորատիվ կառավարման և հաճախորդների սպասարկման տեխնոլոգիաները, ձգտում ընդլայնել առաջարկվող ծառայությունների և պրոդուկտների ցանկը, ներգրավել հմուտ, արհեստավարժ անձնակազմ և ապահովել պահանջվող ռեսուրսների մշտական առկայությունը: Բանկը վերահաստատում է իր որդեգրած ռազմավարությունը՝ դառնալ ունիվերսալ բանկ՝ կորպորատիվ և մանրածախ ծառայությունների հավասար բաշխվածությամբ:

Ռազմավարության գլխավոր խնդիրն է Բանկի առաջատար դիրքերի պահպանումը և ամրապնդումը բոլոր հիմնական ցուցանիշներով,



մասնավորապես.

- ▶ լինել բացարձակ առաջատարը սպասարկման որակով՝ շարունակելով 2008թ. որդեգրված հաճախորդակենտրոն քաղաքականությունը,
- ▶ լինել առաջատարը նորարարություններով՝ առաջարկելով լավագույն միջազգային բանկային լուծումները և ժամանակին արձագանքելով հաճախորդների արագ փոփոխվող կարիքներին,
- ▶ ընդլայնել ծառայությունների տեսականին՝

հաճախորդների ամենատարբեր կարիքները բավարարելու համար,

- ▶ պահպանել ամենամեծ ունիվերսալ բանկի առաջատար դիրքն ըստ ակտիվների՝ ապահովելով կորպորատիվ, մանրածախ և ՓՄՁ պորտֆելների հավասար բաշխվածություն,
- ▶ ապահովել հաճախորդների ավելի մեծ բազայի հասանելիություն՝ տնտեսապես առավել ակտիվ շրջաններում ներկայացուցչությունների ստեղծման կամ հեռակառավարման ծառայությունների զարգացման միջոցով,

- ▶ բարելավել բանկային համակարգի առաջատարի դիրքերը բոլոր հիմնական ֆինանսական ցուցանիշներով,
- ▶ բարձրացնել Բանկի ֆինանսական արդյունավետությունը (կապիտալի եկամտաբերություն և ծախսերի ու եկամուտների հարաբերություն),
- ▶ լայնորեն կիրառել կորպորատիվ կառավարման լավագույն փորձը,
- ▶ ընդլայնել անձնակազմի լոյալությանն ու մոտիվացմանն ուղղված ծրագրերը՝ ներդրումներ կատարելով մարդկային կապիտալի մեջ և պատրաստելով նոր տաղանդների,
- ▶ բարձր պահել բրենդի հեղինակությունը և միջոցներ ձեռնարկել բրենդի մասին իրազեկվածությունն ավելացնելու նպատակով:

Առաքելություն

Բարելավել կյանքի որակը՝

- ▶ մեր հաճախորդներին տրամադրելով միջազգային որակի ֆինանսական ծառայություններ և գործարար լուծումներ,
- ▶ իրականացնելով հասարակության բարօրության համար նշանակալի բիզնես և սոցիալական ծրագրեր,
- ▶ ձևավորելով յուրահատուկ կորպորատիվ մշակույթ և միջազգային ընկերության

զարգացման սեփական մոդելը՝ միավորելով հաջողակ մարդկանց,

- ▶ շարունակաբար բաժնետիրական արժեքը: ավելացնելով

Տեսլական

- ▶ Դառնալ ֆինանսական և գործարար լուծումներ տրամադրող միջազգային ընկերություն:
- ▶ Լինել թիրախային շուկաների առաջատարը սպասարկման որակով և արդյունավետությամբ՝ ներգրավելով ընդհանուր արժեքներ կրող բացառիկ մարդկանց:

Առաքելությամբ ու տեսլականով սահմանված խնդիրները լուծելու և ռազմավարական նպատակներին հասնելու համար մենք նախանշել ենք հետևյալ կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերը.

- ▶ շարունակաբար ներդրումներ կատարել սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, բարելավել բիզնես-գործընթացները, ապահովել ամենաուշադիր և հոգատար մոտեցումը հաճախորդների հանդեպ,
- ▶ որպես միջնաժամկետ նպատակ՝ ավելացնել շուկայի մասնաբաժինը (սրան կնպաստի նաև Բանկի ներգրավված բավականին մեծածավալ նոր կապիտալը, որը թույլ կտա ապահովել հետագա ագրեսիվ աճ),
- ▶ ներկայացնել նոր բանկային ու ներդրումային

ծառայություններ, նորարար լուծումներ՝ միջազգային լավագույն փորձին համահունչ, ներդնել հեռահար սպասարկման բազմաֆունկցիոնալ լուծումներ,

▶ ապահովել ակտիվների առաջանցիկ աճ բանկային համակարգում՝ միևնույն ժամանակ պահպանելով շահութաբերության և ռիսկերի ընդունելի մակարդակ,

▶ ապահովել ընդհանուր եկամտի կառուցվածքում ոչ տոկոսային եկամտի մասնաբաժնի երկարաժամկետ աճ,

▶ շարունակաբար բարձրացնել անձնակազմի մասնագիտական պատրաստվածությունը և մոտիվացիան,

▶ նախապատրաստել առաջնային հրապարակային տեղաբաշխման ծրագիրը. Ամերիաբանկի նպատակն է դառնալ առաջին հայկական բանկը, որը պաշտոնապես կցուցակվի կապիտալի առաջատար միջազգային շուկաներում,

▶ շարունակաբար բարձրացնել ֆինանսական կայունությունը և հավելյալ ապահովություն ստեղծել բոլոր շահառուների համար՝ վերանայելով ռիսկերի պարամետրերը անկայուն ժամանակահատվածներում,

▶ առանձնակի ուշադրություն դարձնել մանրածախ և ՓՄՁ ծառայություններին, շարունակել զարգացնել ներդրումային բանկային ծառայությունները, առաջանցիկ աճ ապահովել բոլոր հիմնական ցուցանիշներով և դառնալ առաջատար արդյունավետության ցուցանիշներով:


ԿԱՆԽԱՏԵՍԵԼ

ՄԱԿՍՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԱՊԱՀՈՎԵԼ
ԲԱՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՏԵՂԾԵԼ ՈՒՐՈՒՅՆ
ԱՐԺԵՔՆԵՐՈՎ ՄԹՆՈԼՈՐՏ



Բաժնետերերի ընդհանուր ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է, որը կանոնակարգում և ղեկավարում է Բանկի գործունեության հիմնական ուղղությունները: Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավասու է հաստատել Բանկի ռազմավարական զարգացման վերաբերյալ բոլոր առանցքային որոշումները:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

2017թ. հունիսի 30-ի դրությամբ Տնօրենների խորհրդի կազմում ընդգրկված էին հետևյալ 7 անդամները:

Տնօրենների խորհրդի կառուցվածքը

Անուն, ազգանուն	Պաշտոն	խորհրդի կազմում առաջին անգամ ընդգրկվելու տարին	խորհրդի կազմում վերընտրվելու տարին
Անդրեյ Մկրտչյան	Տնօրենների խորհրդի նախագահ	2007թ.	2013թ.
Ռուբեն Վարդանյան	Տնօրենների խորհրդի անդամ	2007թ.	2013թ.
Նուբար Աֆեյան	Տնօրենների խորհրդի անդամ	2010թ.	2010թ.
Ռոբերտ Փոն Ռեկովսկի	Տնօրենների խորհրդի անկախ անդամ	2012թ.	2012թ.
Պիեռ Գյուրջյան	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.
Օլեգ Ցարկով	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.
Ալեքսեյ Գերմանովիչ	Տնօրենների խորհրդի անդամ	2016թ.	2016թ.

2017թ. առաջին կիսամյակում Տնօրենների խորհուրդն ունեցել է 2 առկա և 7 հեռակա նիստեր:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Տնօրենների խորհրդին կից կոմիտեներ

Տնօրենների խորհրդին կից գործում են 3 կոմիտեներ, որոնք ձևավորվել են 2016 թվականին և սկսել են իրենց գործունեությունը 2017 թ. հունվարից:

Առևտրի կոմիտե	Վարձատրության կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե
Կոմիտեի հիմնական նպատակն է ապահովել բաժնետերերի շահերի պաշտպանությունը, բարձրացնել Բանկում ֆինանսական հաշվետվողական և արտաքին աուդիտի, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության արդյունավետությունը:	Կոմիտեի նպատակն է աջակցել Բանկում վարձատրության արդյունավետ համակարգի ձևավորմանը, ապահովել նշված համակարգի որակի գնահատումը, իրականացնել վարձատրության կիրառվող մեխանիզմների մոնիտորինգ՝ լավագույն մասնագետներին ներգրավելու և պահելու, ինչպես նաև չարաշահման ցանկացած հնարավորությունն բացառելու նպատակով:	Կոմիտեի նպատակը Բանկի Տնօրենների խորհրդի, վերջինիս կից կոմիտեների և ղեկավարության համարաի հետ տավարժ, փորձառու մասնագետներից բաղկացած կադրային բազայի ստեղծումն է, ըստ անհրաժեշտության նրանց համապատասխան պաշտոններում ներգրավումը, այդ թվում՝ փոխարինելիության ապահովումն ու կադրային բարելավումը, ինչպես նաև կիրառելի օրենսդրական կարգավորմանը համապատասխան՝ կորպորատիվ կառավարման միջազգային լավագույն փորձի ներդրումը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԿԻՑ ԿՈՄԻՏԵՆԵՐ

Կոմիտեների կազմում ընդգրկվելը որևէ կերպ չի ազդում Տնօրենների խորհրդի իրավասությունների ու պարտականությունների վրա և չի սահմանափակում դրանք:

Կոմիտեներն իրենց պարտականություններն իրականացնում են ինքնուրույն, սակայն վերջնական հաստատման համար կոմիտեների առաջարկները որոշումների տեսքով ներկայացվում են Տնօրենների խորհրդի հաստատմանը:

Մանրամասն ուսումնասիրման ենթակա ցանկացած հարց սկզբում պետք է քննարկվի կոմիտեների մակարդակով, այնուհետև ներկայացվի Տնօրենների խորհրդին:

ԿՈՄԻՏԵՆԵՐ	Աուդիտի կոմիտե	Վարձատրության կոմիտե	Կորպորատիվ կառավարման և ղեկավար անձնակազմի նշանակման կոմիտե
Անդրեյ Մկրտչյան			Նախագահ
Ռուբեն Վարդանյան		Նախագահ	անդամ
Նուբար Աֆեյան		անդամ	անդամ
Ռոբերտ Փոն Ռեկովսկի	անդամ		
Պիեռ Գյուրջյան	Նախագահ		
Օլեգ Ցարկով	անդամ		
Ալեքսեյ Գերմանովիչ		անդամ	

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Տնօրինություն

Բանկի ամենօրյա գործունեությունը կառավարում է Բանկի գործադիր մարմինը՝ Տնօրինությունը՝ Տնօրինության նախագահի գլխավորությամբ:

Արտակ Հանեսյան

Գևորգ Թառումյան

Գագիկ Սահակյան

Արման Բարսեղյան

Արթուր Բաբայան

Տիգրան Զրբաշյան

Գոհար Խաչատրյան

Սամվել Աղաբաբյան


Անդրանիկ Բարսեղյան

Բուրաստան Մովսիսյան

Պաշտոն	Տնօրինության անդամ նշանակվելու տարին
Տնօրինության նախագահ - Գլխավոր տնօրեն	2007
Գլխավոր տնօրենի տեղակալ, ֆինանսական տնօրեն	2012
Կորպորատիվ հաճախորդների գծով տնօրեն	2012
Մանրածախ գործառնությունների գծով տնօրեն	2012
Առևտրային գործառնությունների գծով տնօրեն	2013
Չարգացման գծով տնօրեն	2008
Գլխավոր հաշվապահ	2008
Անվտանգության ծառայության ղեկավար	2012
Ռիսկերի կառավարման կենտրոնի ղեկավար	2009
Տեխնոլոգիաների և գործառնությունների գծով տնօրեն	2014

ՄՏԱԾԵԼ

ՄԵԿ ԲԱՅԼ ԱՌԱՋ, ԲԱՅԼԵԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՀԱՄԸՆԹԱՑ ԵՎ ՍՏԵՂԾԵԼ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ
ՑԱՆԿԱՑԱԾ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ



Մակրոտնտեսական գործոններ

ՀՀ տնտեսություն և բանկային համակարգը հաշվետու ժամանակահատվածում գտնվում էին հետևյալ գործոնների բացասական ազդեցության ներքո՝ դանդաղ աճ ամբողջ աշխարհում և տարածաշրջանում, ապրանքային շուկաների ցածր ցուցանիշներ, ցածր ներքին պահանջարկ, կապիտալի, օտարերկրյա ուղղակի ներդրումների պակաս, բնակչության և բիզնեսի վատատեսական սպասումներ, քաղաքական ընտրություններ և անորոշություններ քաղաքական դաշտում: Նավթի և մետաղների գների տատանումները, Ռուսաստանի տնտեսության, գլոբալ լարված աշխարհաքաղաքական իրավիճակը, ԵՄ տնտեսության և բանկային համակարգի խնդիրները որոշակի ռիսկեր էին առաջացնում ՀՀ տնտեսության համար:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

2017թ. 1-ին կիսամյակում բանկը գործեց սահմանված ռիսկի ախորժակի սահմաններում: Բանկի ռիսկի ախորժակը, կապիտալի համարժեքության ցուցանիշը գտնվում էին ռիսկի ընդունելի գոտիներում: Ռիսկի հիմնական աղբյուրը վարկային ռիսկն էր: Ռիսկի այլ աղբյուրներով պայմանավորված կորուստները չնչին էին:

Այնուամենայնիվ, 2017թ.-ի 1-ին կիսամյակի ավարտին ՀՀ տնտեսությունը որոշակի կայունացման և դրական հեռանկարների սպասումներ արձանագրեց նախորդ ժամանակաշրջանի համեմատությամբ ի հաշիվ ՀՀ տնտեսության վրա էական ազդեցություն ունեցող ՌԴ տնտեսության կառավարելիության բարձրացման, տրանսֆերտների անկման կայունացման, ՀՀ համար ԵՏՄ շուկայի պոտենցիալի, պղնձի գնի բարձրացման, ՀՀ բանկային համակարգի կապիտալացման բարձրացման, ՀՀ Կառավարության ծրագրերի: Բանկային համակարգին սպառնացող ռիսկերը բխում էին ՀՀ տնտեսության առկա իրավիճակից, թույլ պահանջարկից, հնարավոր արժեզրկումից,

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մակրոմիջավայրի ռիսկեր

Ռիսկեր և անորոշություններ

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ տնտեսությունը և բանկային համակարգը մի շարք գործոնների բացասական ազդեցության տակ էին: Դրանք էին՝ ցածր ներքին պահանջարկը՝ պայմանավորված ռուսական տնտեսության վիճակով, օտարերկրյա ուղղակի ներդրումների պակասը, մասնավոր փոխանցումների կրճատումը, բնակչության և բիզնեսի բացասական սպասումները, քաղաքական ընտրությունները, անորոշությունը քաղաքական ասպարեզում, ՀՀ ԿԲ քաղաքականությունը տարադրամի փոխփոխարժեքի հարցում, տարածաշրջանում զինված հակամարտության վտանգը: Դա հանգեցրեց ցածր տնտեսական ակտիվության, որը սակայն կիսամյակի ավարտին դրսևորեց որոշակի դրական զարգացում:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

- ▶ ՀՆԱ-ի աճ՝ 6.5%, (I եռամսյակ)
- ▶ ՍԳԻ՝ +1.6% (մայիս ամիսը նախորդ տարվա մայիսի նկատմամբ)
- ▶ Օտարերկրյա ուղղակի ներդրումները I եռ. ընթացքում նախորդ տարվա I եռ. նկատմամբ աճել են շուրջ 87%-ով: Այնուամենայնիվ ցուցանիշը ցածր է 2014-15 թթ.-ի արդյունքից: Մասնավոր փոխանցումները աճել են 27%-ով 2016թ.-ի նկատմամբ, այնուամենայնիվ ցուցանիշն ավելի ցածր է 2015թ.- արդյունքից (հունվար - մայիս):
- ▶ Դոլնձի գինը բարձրացել է առաջին կիսամյակի ընթացքում և կազմել է մոտ՝ 5,950ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց: 2017թ.-ի I կիսամյակի ընթացքում միջին գինը նախորդ կիսամյակի միջին գնի նկատմամբ գրանցել է +14% աճ:
- ▶ ՀՀ բանկային համակարգում՝ -խնդրահարույց վարկերի միջին ցուցանիշը կազմել է 10% (առաջին եռամսյակ): -կապիտալի համարժեքու-թյան ցուցանիշը կազմել է 19.6%: -կապիտալի եկամտաբերությունը տարեկան կտրվածքով կազմել է ընդամենը 5.8%: -իրացվելիության գործակիցներն ավելի քան երկու անգամ գերազանցել են նորմատիվային ցուցանիշները: -ընդհանուր սեփական կապիտալն առաջին կիսամյակում աճել է 5.6%ով:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները

Հաշվի առնելով մակրոտնտեսական իրավիճակը՝ Բանկը՝

- ▶ սահմանեց մակրո ռիսկերի և մակրոտնտեսական միջավայրի կայուն սցենար և վարկավորման համապատասխան ռեժիմ՝ շարունակելով գործել զսպված վարկային քաղաքականության ներքո,
- ▶ ուշադրության կենտրոնում էր պահում խնդրահարույց վարկերի վերադարձը և վերահսկում էր ռիսկային վարկերը,
- ▶ կենտրոնացավ լավագույն վարկառուներին շուկայի լավագույն պայմաններով ներգրավման և վարկավորման վրա:

Վարկային ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

2017թ. տնտեսական վիճակը, սպասումները և անորոշություններն ազդեցին թե՛ տնտեսության իրական հատվածի, թե՛ անհատների վրա, ինչի արդյունքում վարկային ռեսուրսների պահանջարկը նվազեց:

Միևնույն ժամանակ 2017թ. 1-ին կիսամյակում Բանկի վարկային ռիսկի ցուցանիշները արձանագրեցին ռիսկի ախորժակին համապատասխանող պորտֆելի որակ, իսկ վարկային ռիսկի ահազանգման ինդիկատորները՝ վարկային ռիսկի նվազման միտում:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Բանկի խնդրահարույց վարկերի ցուցանիշը 2017թ. 1-ին կիսամյակի ավարտին կազմել է ընդամենը 4.9%, որն անհամեմատ ցածր է ՀՀ բանկային համակարգի միջին ցուցանիշից (6.0%): Ընդ որում, կորպորատիվ խնդրահարույց վարկերի ցուցանիշը 4.8% էր, իսկ մանրածախ վարկերի ցուցանիշը՝ շուրջ 5.8%:

Վարկային ռիսկի արժեքը կազմել է վարկային պորտֆելի 2.4%ը: Վարկերի հնարավոր կորուստների պահուստները ծածկել են խնդրահարույց վարկերի 60%-ը (առանց գրավադրված գույքի արժեքի ճշգրտումների):

Ոլորտային կենտրոնացման մակարդակը ցածր էր, մեկ ոլորտում կենտրոնացման առավելագույն ցուցանիշը չի գերազանցել վարկային պորտֆելի 13%-ը, ոլորտներում պորտֆելի վատթարացման հատուկ տենդենցներ չեն արձանագրվել:

Ռիսկի վաղ ահազանգման հիմնական ցուցանիշները կայուն դրական միտում են դրսևորել:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները

Հիմքում ունենալով 2016թ. բացասական միտումները և սպասումները, 2017թ. 1-ին կիսամյակի ընթացքում Բանկը.

- ▶ Որդեգրեց լավ որակի/լույս վարկառուների ներգրավման և խրախուսման գործընթացը՝ ստեղծելով և ներդնելով ռիսկից կախված վարկավորման պայմանների կիրառման մոտեցումը,
- ▶ շարունակեց առաջնորդվել վարկավորման պայմաններից շեղումների զսպման և կառավարման մոտեցումով,
- ▶ շարունակեց ամրապնդել վարկային պորտֆելի որակը՝ ինտենսիվ կառավարելով և հսկելով ռիսկային և խնդրահարույց վարկերը,
- ▶ վարկային ռիսկի արժեքը ներառեց տոկոսադրույքի կառուցվածքում,
- ▶ նախաձեռնեց հատուկ արշաֆներ՝ լավագույն վարկառուներին լավագույն պայմաններով ներգրավելու համար:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շուկայական ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

2017թ.-ի առաջին կիսամյակում շուկայական ընդհանուր իրավիճակը բարելավվել է, սակայն պահպանվեց անորոշության որոշակի մակարդակ:

ՀՀ ԿԲ-ի գործողությունների շնորհիվ ՀՀ դրամի փոխարժեքը բավականին կայուն էր, սակայն դրամի արժեզրկման վտանգը դեռ պահպանվում էր: ՀՀ բանկային համակարգում սեփական կապիտալի ներհոսքը նպաստեց նաև տեղական շուկայում արտարժույթի առաջարկի վրա: Տոկոսադրույքների վարքագիծը ՀՀ շուկայում տարբերվում էր միջազգային տոկոսադրույքների վարքագծից: ՀՀ ներքին շուկայում տնտեսական վիճակի և մրցակցության արդյունքում թե՛ ավանդների, թե՛ վարկերի տոկոսադրույքները նվազման միտում էին դրսևորում: ԱՄՆ Դաշնային պահուստի քաղաքականությունը հանգեցրեց նրան, որ համաշխարհային շուկայում տոկոսադրույքները շարունակեցին բարձրանալ, ինչի արդյունքում LIBOR-ի տոկոսադրույքը պահպանել է աճի տրենդը և գրանցել է ամենաբարձր մակարդակը 2009թ.-ից ի վեր: Դրամի կայուն փոխարժեքի և ՀՀ ԿԲ-ի կողմից վարվող՝ հիֆսական տոկոսադրույքների իջեցման քաղաքականության պայմաններում հայկական արժեթղթերը բարձր արդյունավետություն էին դրսևորում:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Շուկայական ռիսկերից առաջացող կորուստը/ռիսկի ախորժակը 2017թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում ցածր ռիսկի գոտում էր :

Տարվա ընթացքում բաց արտարժույթային դիրքը երկար էր՝ պայմանավորված աշխարհում դոլարի ամրապնդման ակնկալիքներով: 2017թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում արտարժույթային դիրքի վերագնահատման արդյունքներն էական չէին:

Տոկոսադրույքի, այդ թվում՝ լողացող տոկոսադրույքի (LIBOR-ի վրա հիմնված) ճեղքվածքը Բանկի համար շուկայական ռիսկերի առաջացման հիմնական աղբյուրն էր: Սակայն փաստացի արդյունքները չգերազանցեցին սահմանված ռիսկի ախորժակը:

Արժեթղթերի պորտֆելի ծավալը և ժամկետայնությունը (3 տարուց պակաս) թույլ էին տալիս պահպանել շուկայական ռիսկը, սթրես-թեստերի հիման վրա գնահատված ֆասսը և փաստացի ֆասսն ընդունելի ռիսկի ախորժակի սահմաններում: Բանկի արժեթղթերի պորտֆելը հիֆսականում բաղկացած է ՀՀ պետական պարտատոմսերից (84%): Պորտֆելի 11%-ը կազմում են ներդրումները բարձր վարկանիշ ունեցող, ցածր ռիսկային արժեթղթերում:

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները

- ▶ Ռիսկի ախորժակի/հնարավոր կորուստների կառավարումն իրականացվում էր հատուկ սթրես-թեստերի, առկա միտումների մոնիթորինգի և գնահատումների միջոցով:
- ▶ Օրական կտրվածքով հատուկ հսկողության տակ էին պահվում բաց արտարժույթային դիրքերը:
- ▶ Պարբերաբար հաշվարկվում էին և մոնիթորինգի ենթարկվում տոկոսադրույքների ակնկալվող բացասական փոփոխությունները: Հեջավորման բարձր արժեքի հետևանքով ռիսկի նվազեցման հնարավորությունները սահմանափակ էին, բայց և այնպես, ռիսկը նվազեցվում էր սվոփ պայմանագրերի, վարկավորման և ֆինանսավորման տոկոսադրույքների ակտիվ կառավարման միջոցով:
- ▶ Բարելավվել է արժեթղթերի պորտֆելի դիվերսիֆիկացումը: Բանկը հավելյալ իրացվելիությունը բաշխեց արտասահմանյան ցածր ռիսկային և բարձր իրացվելի կարճաժամկետ սուվերեն և կորպորատիվ արժեթղթերում:

2017թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում իրացվելիության բարելավման, արժեթղթերի պորտֆելի դիվերսիֆիկացման և եկամտաբերության բարձրացման նպատակով Բանկը շարունակեց ձևավորել արժեթղթերի պորտֆելի նոր, ռիսկի ախորժակով սահմանափակված կառուցվածք:

Գործառնական ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

Բանկային համակարգում ամբողջ աշխարհով մեկ շարունակում է զգալիորեն աճել կիբերհանցագործությունների թիվը, ինչը կարող է ֆինանսական ֆասսի պատճառ դառնալ, ինչպես նաև խաթարել գործառնականությունների իրականացումը և վտանգել գործունեության անընդ-հատությունը: Համացանցի և բջջային հավելվածների միջոցով իրականացվող առևտրի ծավալի աճին զուգահեռ ողջ աշխարհով մեկ աճում է նաև քարտային խարդախությունների թիվը: ՏՏ անվտանգությունը դառնում է հիֆսախնդիր աշխարհի բոլոր ֆինանսական հաստատությունների համար:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Կարգավորվող և հսկվող գործընթացների շնորհիվ Բանկին հաջողվում է գործառնական ռիսկը պահել ցածր մակարդակում:

2017թ. 1-ին կիսամյակում կրած ընդհանուր գործառնական ֆասսը մոտ է գրոյական արժեքին:

Պատահարների ճնշող մեծամասնությունը գրանցվում է արտաքին զեղծարարությունների խմբում:

Տարեցտարի ավելանում է բանկի՝ հեռահար բանկային ծառայություններից օգտվող հաճախորդների և քարտապանների թիվը: Առկա ընդհանուր փոքրածավալ կորուստների հիֆսական մասը կազմում են վճարային քարտերի զեղծարարությունների գծով կորուստները:

Բանկի բոլոր համակարգերը գործում են ընդունելի և կառավարելի ռիսկի պայմաններում:

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները 2016թ.

- ▶ Գործառնական ռիսկերի կառավարման նպատակով Բանկում գնահատվել և վերագնահատվել են մի շարք գործընթացներ և համակարգեր: Գնահատումների արդյունքում առանձնացված բարձր ռիսկերի համար առաջարկվել և ներդրվել են ռիսկերը կանխարգելող և/կամ նվազեցնող համապատասխան լուծումներ:
- ▶ Բանկի գործառնական ռիսկերը վերահսկվում էին համապարփակ և համակարգված եղանակով:
- ▶ Ուշադրության կենտրոնում էին ՏՏ համակարգի անվտանգությունը, անձնակազմի վերապատրաստում-ները, որոշումների կայացման լիմիտավորումը և իրավասությունների բաշխումը:
- ▶ Բանկը ունի բանկային ռիսկերի համապարփակ և արդյունավետ ապահովագրություն (ֆինանսական հաստատությունների համապարփակ ապահովագրություն, կանխիկ միջոցների, գույքի, բանկումատների, երրորդ անձանց պատասխանատվության ապահովագրություն և այլն):

ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԻՄՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԱՆՈՐՈՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրացվելիության ռիսկ

Ռիսկեր և անորոշություններ

Իրացվելիության մակարդակը ՀՀ բանկային համակարգում էապես բարձր է: Դրան նպաստեց 2016թ. կապիտալի ներհոսքը ի պատասխան ՀՀ ԿԲ-ի պահանջի՝ բանկային համակարգի հուսալիությունը բարձրացնելու և դրամական պահանջարկը բարելավելու նպատակով: Մյուս կողմից, դեռ 2014թ. սկսված հայաստանյան տնտեսության աճի դանդաղելու արդյունքում կրճատվեցին վարկավորման ծավալները՝ տեղական շուկայում առաջացնելով ավելցուկային իրացվելիության բաշխման խնդիր: Բանկի իրացվելիությունը կառավարվում էր արդյունավետ կերպով և պահպանվում էր բավարար մակարդակի վրա: 2017թ.-ի առաջին կիսամյակում Բանկը իրացվելիության հետ կապված ռիսկերի չի ենթարկվել:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Իրացվելիության բոլոր գործակիցներն անգամ ամենաբացասական սթրես-սցենարների դեպքում համապատասխանում էին ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված պահանջներին: Առաջին կիսամյակի ընթացքում իրացվելիության ռիսկը չնչին էր և զսպվում էր ընդհանուր ռիսկի պարամետրերի համակարգի շրջանակներում:

Ավելին,	սթրես-թեստերի	ժամանակ
իրացվելիության	ճեղքվածքն	անգամ
ամենառիսկային	սցենարների	դեպքում
արձանագրել է	իրացվելիության	բավարար
պաշար:		

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները 2016թ.

- ▶ 2017թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Բանկը շարունակեց օգտվել այլընտրանքային ներդրումների հնարավորություններից և շարունակեց ներդրումային պորտֆելի ընդլայնման և դիվերսիֆիկացման գործընթացը՝ ներդրումներ կատարելով ցածր ռիսկայնություն ունեցող, բարձր իրացվելի արտասահմանյան դոլարային պարտատու-սերի մեջ:
- ▶ Բարձր իրացվելի ակտիվների տեղաբաշխման դիվերսիֆիկացումն ապահովվում է նաև բարձրակարգ գործընկերների ցանցի միջոցով: Բանկն ընդլայնեց իր գործընկերների ցանցը՝ կապեր հաստատելով արտասահմանյան ֆինանսական հաստատությունների հետ, ինչի շնորհիվ Բանկի համար հասանելի են դառնում մեծ թվով ֆինանսական գործիքներ և իրացվելիություն ապահովող մեխանիզմներ:
- ▶ Ավանդային բազայի կայունությունը և հետագա աճն ապահովելու համար Բանկը սահմանում էր ավանդների տոկոսադրույքները՝ հիմք ընդունելով շուկայում գործող տոկոսադրույքները: Բանկն աշխատում էր նաև այլ աղբյուրներից (միջազգային հաստատու-թյուններ) ռեսուրսների ներգրավման ուղղությամբ:

Շրջակա միջավայրի և սոցիալական ռիսկեր

Ռիսկեր և անորոշություններ

Բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը հեռանկարային և արդյունավետ բիզնես ունենալու կարևորագույն գրավականն է: Ամերիաբանկն միտված է աջակցել հաճախորդներին՝ E&S համակարգի կարևորությունն ընկալելու և ներդնելու ուղղությամբ: Յուրաքանչյուր վարկային հայտի համար նույնականացվում և գնահատվում է հաճախորդի գործունեության E&S կառավարումը, իսկ վարկային հայտը կնքելուց հետո իրականացվում է նաև համակարգի մոնիթորինգային վերահսկում:

Ռիսկի հիմնական ցուցանիշներ

Տարեսկզբի համեմատ Ամերիաբանկի վարկային պորտֆելում բնապահպանական ցածր և միջին ռիսկային հայտերի մասնաբաժինը Էական փոփոխության չի ենթակվել (փոփոխությունը գրանցվել է տասնորդական կարգով)՝ ծնալով 85%: Իսկ ցածր և միջին սոցիալական ռիսկի ցուցանիշը վարկային պորտֆելում գնահատվել է 74%՝ սոցիալական բարձր ռիսկերի $\approx 12\%$ նվազմամբ: Բանկի կողմից Բարձր Ա դասի միայն մեկ գործունեություն է ֆինանսավորվում, որը կազմում է վարկային պորտֆելի 0,04%-ը:


ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի նվազեցմանն ուղղված գործողությունները 2016թ.

Բանկում գործող բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգը համապատասխանեցված է ՄՖԿ-ի և ՎՁԵԲ-ի չափորոշիչներին և պահանջներին, ինչպես նաև միջազգային ֆինանսական այլ կազմակերպությունների կողմից սահմանված չափանիշներին: ՄՖԿ մասնագետների հետ իրականացված վերջին հանդիպում-քննարկումից հետո մշակվել և առանձնացվել է Ամերիաբանկի ԷԼ-կայքում ESMS-ին առնչվող առանձին մաս, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի կարող է ծանոթանալ Ամերիաբանկում գործող բնապահպանական և սոցիալական ռիսկերի կառավարման համակարգին: Իրականացվել է վարկային պորտֆելում առկա բոլոր հայտերի E&S գնահատում և մոնիթորինգ:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԵԼ

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ԶԳՏԵԼՈՎ
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒԹՅԱՆ



ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամերիաբանկի 2017 թ. երկրորդ եռամսյակի ֆինանսական
հաշվետվություններին կարող եք ծանոթանալ այստեղ՝

